

„Droschak”

ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

REVUE
„Droschak”
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՅՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Այն նշանաւոր պայմանները, որ մենք արդէն մատնացոյց արինք իբր արգելքներ հայ-քրդական մերձեցման, հասկանալի է, որ չեն կարող ներկայ օրերում առանձին հաւատ ներշնչել այդ երկու տարրերի մշտական, սիստեմատիք միացած գործակցութեան մասին: Բարեջընէլ քիւրդերի բարբարոս կենցաղը, որ տարբեր է մերինից, շարունակ յաղոյ կերպով մրցել երկու կառավարութիւնների հետ, որոնք հաւասարապէս թշնամի են քիւրդ-հայկական համերաշխութեան. չէզօրացնել կրօնական ազդեցութիւնները, որոնք քրդերի մէջ համանիշ են ազգայնական հակացողութեան,— դրանք այնպիսի խոշոր կուլտուրական խնդիրներ են, որոնք կարող են մշակել անդադար գործող մուրճի տակ, երկար ժամանակի ընթացքում: Մինչդեռ հայկական հարցի բնաւորութիւնը, մեր ժողովրդի արդի կացութիւնը, կուլտուրային յատուկ մեր լարւած տրամադրութիւնները, ընթացիկ կեանքի անյետաձգելի պահանջները մեզ թող չեն տալիս հեռուոր ապագայի վրայ հիմնել ժամանակակից մեր հոգսերը և գործնական ծրագիրները:

Ահա այդ տեսակէտից քիւրդ-հայկական հակառակութիւնները պայմանաւորող գլխաւոր պատճառների առաջնաւորները, իբրև արմատական և միևնոյն ժամանակ շատ բարդ գործ, չէ կարող իր ամբողջ ծաւալով զբաղեցնել մեզ: Այժմէական կարեւորութիւն ունեցող միակ խնդիրը ուրեմն կը մնայ այն թէ չէ կարելի արդեօք, գոնէ յայտնի չափով մեղմացնել այդ հիմնական արգելքների վնասաբեր բնաւորութիւնը, կամ ուրիշ խօսքերով՝ չէ կարելի արդեօք նոյնիսկ այժմէան հանգամանքներում գտնել քրդական կեանքում ուրիշ այնպիսի գործոններ, որոնք կարող են, եթէ ոչ օրէցօր զարգացնել քիւրդ-հայկական համերաշխութիւնը ընդհանրապէս, գոնէ տալ մեզ ունէ հող մասնակի, տեղական, երբեմն վաղանցիկ, երբեմն փոքրիշատէ տեղական, երբեմն աննշան, երբեմն լայն յարաբերութիւններ հաստատելու համար:

Ապէստեղ իր «Բաղաբական հիմնարկութիւնների զարգացման» մէջ խօսելով «պատերազմասէր հասարակութիւնների տեսակի» վրայ, ստում է, որ նրանց

մէջ ոչառ ուժեղ է հնազանդելու բնազդը» և բնահակառակը՝ «անհասկանալի նախաձեռնութիւնը կաշկանդւած է», որ այդպիսի հասարակութիւնների մէջ իշխում է «կրօնական համաձայնութիւն և սպասուկանութեան գրութիւն», որի շնորհիւ հասարակութեան պետք, առաջնորդը հանդիսանում է ուղիւստոր դերակատար կեանքում: Արեւմտեայ պարսկահայեր ճշմարտութիւնը քրդերին պէտք է տեսնենք, որ նոյն ցեղական սիկոլոգիայով, որ նրանց մէջ քաղաքակրթական այնքան յետամնաց գրութեան յատկանիշ է, ունի մեզ հետաքրքող խնդրի տեսակէտից մի առաւելութիւն, որն արժանի է առանձին ուշադրութեան: Ընդհանրապէս սկզբունքներ քրդերի մէջ համարելը օրինակ մի ցեղական սիկոլոգիայի (էլ-աղասի, միք) կամ մի կը ունի սիկոլոգիայի (չէյիս) — գամիւնոյն է՝ թէ համոզել նրա ամբողջ ցեղը, որն իր «կրօնական համաձայնութեան» մէջ գիտէ միայն հնազանդել իր իշխանաւորներին և կատարել նրանց կամբքը: Բաղաբակրթական տուրք բարձր շրջաններում, իհարկէ, պետերի նշանակութիւնը կեանքում սահմանափակում է, հետզհետէ դադարելով ամբողջ հասարակութիւնների պատմական կեանքը իրենց մէջ անդրադարձնելուց: Բայց այդպէս չէ ստորին զարգացման աստիճանների վրայ, ուր հասարակական յարաբերութիւնները չափազանց պարզ են, ուր չկան բազմակից հիմնարկութիւններ, մարդկային գործունէութեան բազմազան ձիւղեր, գաղափարների անընդհատ մշակում, կեանքի նորանոր հոսանքներ իրենց մշտական փոխադարձ ազդեցութիւններով, բնագործունէրով և ինքնաբերական փոփոխութիւններով, որոնք ստանալով «Պաշտակազին» գետեղում է քրդերի մի նշանաւոր շէյիսի մտ, որը «մի օրուայ մէջ կարող է 10 կամ 20 հազար ձիւղոր դուրս բերել», կամ երբ խօսելով հայերի մասին՝ նա, Առլանի բերանով ցուէ յայտնում, որ հայերը աղնականութիւն չունեն, թէև ինքը ոչ համարում աղնականութեան գաղափարին», — մեզ թւում է, որ նա ինկատի ունի հէնց այդ յետամնաց գրութեան մեր մասնացոյց արած որոշ առաւելութիւնը: Հայ աղնականութիւնը, շնորհիւ իր դիրքի և հեղինակութեան ժողովրդի առաջ գուցէ կարողանար կայել համախմբել ու մղել նրան դէպի մեր ազգային ազատագրութեան գործը... մասնում է Բաժճին:

Ընդունելով ուրեմն, որ ցեղական սկզբունքը շատ նպաստուոր պայման է ներկայանում մեզ հետաքրքրող

... արդիւնք այժմ, որքան հեշտ է կամ կարելի է արժեքն ունենաւ պետերի հետ համերաշխութիւն հաստատելու արժեքը

«Քրդերը թշնամաբար են վերաբերում թիւրքերին: Անէն բանից երևում է, որ նրանք, ինչպես և թիւրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, հշտում են անշատամարտ և որ նրանք պատրաստ են առաջին յարմար դէպքում ապրատամբել իրենց նախկին անկախութիւնը ձեռք բերելու համար», — ասում է Շիպրդեր-Վերտեն-Ֆելդը, որի մասին յիշեցրինք անցեալ անգամ: Նոյն երևոյթի մասին վկայում է նաև Բէկլին:

«Այս դարի կիսից սկսած՝ մասնաւորապէս ուսուսաց վերջին արշաւանքից յետոյ տեղի ունեցած քրդական ապստամբութիւններից շատերը անշուշտ նպատակ ունեին ձեռք բերել քաղաքական անկախութիւն: Մինչև անգամ փորձեր եղան հիմնելու մի «Քրդական դաշնակցութիւն»:

Եւ տեղի ունեցած փաստերը հաստատում են այս վկայութիւնները: Բէկլանդուզի փաշայիցը, Հէյքարի, Բախտանի, Բէդրինանի իշխանութիւնները ընկան ոչ աւանց ընդդիմադրութեան տաճիկ կառավարութեան. Բէգեր-խանի ապստամբութիւնը (1846), Եղանչերի կռիւները (1854), մի քանի պետերի առաջարկները Նորինն ուսուսաց հեւապատսին՝ ընդդէմ տաճիկ կառավարութեան (1876), Շէյխ-Էրազուլա հի ծրագիրը միւնստըն մարտը (1880) — ասա մի քանիսը այդ փաստերից:

Միևնոյն տրամադրութիւնը պետք է լինի քրդերի մէջ նաև դէպի ուսուսները: Քիւրդ պետերից շատերն են հասկանում, որ ուսուսաց տիրապետութիւնը կորստաբեր է իրենց նիստ ու կայրի, իրենց արտօնութիւնների և ցեղական ամբողջ կազմի համար: Թուս գնդապետ Պարցուլը, որի նկարագրի հետ մենք արդէն ծանօթ ենք, ուղղակի յայտարարում է.

«1827 թւին, երբ կամ Պապէկչը տիրեց Երևանեան խանութեանը, քրդերը հաւատարմութեամբ ծառայում էին Երևանեան սարգապներին և ամէն կերպ օգնում էին նրանց ուսուսների դէմ: Բացի կրօնական պատճառներից՝ նրանց դրդում էր պատերազմել մեր դէմ՝ այն միտքով, որ միտքով հիմնաւոր համոզմամբ ուսուսների հաստատելուց յետոյ վերջ կը դնուի նրանց վայրենի աղատութեան: Նրանց կոմայականութեանը և աւարտութիւններին»:

Մենք ոչ մի կերպ չենք մոռանում իհարկէ, որ շտաբերով այս տանդութիւններին դէպի տաճիկ և ուսուս ստամբութիւնները, շատ յաճախ քրդերը, շորհիւ իրենց կեանքում տիրող պայմաններին, սոսկալի գործիք են դառնում իրենց թշնամիների ձեռքում՝ ի վնաս հարևան ժողովուրդների: Բայց քանի որ անհերքելի են այս արամադրութիւնները, որոնք անշուշտ նոյնպէս ունին որոշ արևատներ քրդական կեանքում և որոնց արատայապատութիւնը եղաւ, խնդրէ այլոց, «համդրելիս» շատ ցեղերի շմասնակցելը, ինչպէս նաև մինչև վերջին ժա-

մանակներս տեղ-տեղ պահպանուող քրդերի կիսաանկախ դրութիւնը, — մենք կարծում ենք, որ կայ որոշ հող, որի վայ կարող են մշակել եթէ ոչ մշտական, դոնէ ժամանակաւոր, եթէ ոչ լայն ծաւալով, դոնէ մասնաւոր համաձայնութիւններ այս կամ այն քիւրդ պետերի հետ:

Եղանչերի ժողովուրդական մի երգ այս խօսքերն է պարունակում. «Քորինին խնայում է կեանքը և միայն դիակներ է հանում գերեզմանից, իսկ փաշան երիտասարդների արիւն է խմում... Անիճիկ հզորը, որ դուր չունի»:

Պիլքեր են քրդերի համար այդ «դուր չունեցող հզորները» — թիւրքերը, ուսուսները թէ՛ հայերը... Անկարելի է, որ քրդերի մէջ չգտնեն իրենց դրութիւնը բուսականապի գիտակցող պետեր, որոնք չկարողանան այս հարցին պատասխանել այն ձևով, որը համապատասխանում է իրենց և մեր փոխադարձ շահերին:

Բայց և մենք հայերս պետք է ջանանք այդ գիտակցութիւնը նրանց ներշնչել: Միայն՝ դրա համար մենք չունենք ուրիշ միջոց, քան մեր սեփական ուժերը հարցատապանելու և կեանք անի ուրիշ օրինակներով ապացուցանելու, որ մենք ընդունակ ենք պաշտպանել մեր և շատ անգամ նաև մեր հարևանների շահերը: Պապէկչանք այդ ուժը, կ'ունենանք և քիւրդ դաշնակիցներ: Հակառակ դէպքում հայերը աւելի ձեռնառու պիտի մնան քրդերի համար իբրև հարստահարութիւնների և թաղանի առարկայ, քան իբրև զինակիցներ ընդհանուր թշնամիների դէմ:

Ս Ե Ր Ո Ր Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

«Այսպէս վերջացաւ մեծ նիստում ու մեծ սարսափ ներշնչող Սերոբ-փաշան, ազատութեան ծարաւի, իղէալով տրորուած, միշտ լալին ձգտող մեծ քաղաքացի»...
Գ-ր Ա. ԱՂԼԸ

Պակէ գաղաթը բանձրիկ նեմրութայ
Վառ-վառ կը շողայ մէջ զանայ ծովուն.
Աղիզ սնունդի, քաջ Սերոբ-փաշայ,
Սըբաստով փէլուն մէջ մեր սրտերուն.
Թող արարքներուդ արժանի գովքն էլ
Խղճուկ դուսանիս անզարգ երգերում
Քինջ աղբերի պէս գլայ, գլղլայ...

Նեմրութայ սարը հաղար ակն ունի՝
Հաղալն էլ Քըշու գաշան ի վայր կերթայ.
Մենակ Սերոբի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ —
Ազաա օրերի, գալար օրերի
Ծարաւ ժողովրդի սրտի մէջ կերթայ...

Նեմրութայ սարը քառսուն ժէո ունի,
Քառսունի գլխուն մարմար քարափ կայ —
Էն քարիփի վրայ արծիւն է նստեր —



ԱՂԲԻԻՐ-ՍԵՐՈՐ
(ՍԵՐՈՐ ՎԱՐԳՍԵՆԱՆ)

Ճէտերի արքան իր գահի վրայ —
 Աւ կտուցի մէջ մի սիրտ է բռնել,
 Եւ զիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ
 Արքերի արքան անպէրի վրայ . . .
 — ԴՆՅ, ականջ արէք, հոգիք ու հաւքեր,
 Կարիճ Սերոբի սիրտն է կրտսիս մէջ, —
 Սիրաք, որ ձեզնէն բանձրանց կը թռնէր:
 Է՛յ, ականջ արէք, սարեր ու ձորեր,
 Սերոբ-փաշայի սիրտն է կրտսիս մէջ:
 Սիրաք, որ ձեզնէն մեծ էր ու խորն էր:
 Սերոբ-Աղբիւրը ազատ Նեմրուձից
 Աղբիւրի նման վազեց ընտն ի վայր
 Աւ հեղեղ գառաւ, ա՛հ ու մա՛հ սգուեց,
 Զարկեց ու ջարդեց հայու դիւշմանն՝
 Բուրդին ու թուրքին հարուր ու հազար:
 Ախ, քուրդն ու թուրքը վախկոտ են, նամարդ,
 Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ,
 Փաշայ, փատիշահ աղւէս են, նամարդ,
 Սիրտ չունին կուել ճակատ առ ճակատ:
 Եթ թարի բոլոր ետեւէ ընկան,
 Ըւարդ տեսան, եթ թը ծակ մտան,
 Վերջն հազար դաւու՛ր հազար խաղերով
 Ընկար, քա՛ղ Սերոբ . . . Աւ երբ գուն ընկար,
 Ես եկայ, հասայ, սիրող հանեցի,
 Որ գէշ դիւշմանն փայ-բաժին չընի:

Դիպիթ սիրաք քա՛ղ Սերոբի
 Արևի պէս
 Նեմրուձ սարում լոյս կուտայ,
 Աւ քարերում, սև հողերում
 Թէկուզ թաղում՝ չի մաքի, —
 Սուրբ վաթանի, ազգի սիրուն
 Զուր յաւիտեան չի մարի:
 Կարիճ սիրաք քա՛ղ Սերոբի
 Արևի պէս
 Նեմրուձ սարում բոց կուտայ,
 Սարի սառուց, ձիւների մէջ
 Թէկուզ թաղում՝ չի սառի, —
 Ժողովրդի ազատ օրւայ,
 Պատի սիրուն չի սառի,
 Զուր յաւիտեան չի սառի . . .

Նեմրուձայ սարը հազար ակն ունի,
 Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթայ,
 Մենակ Աղբիւրի աղբիւրը սրտի
 Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ —
 Ազատ օրերի, դաշար օրերի
 Ծարաւ վաթանի սրտի մէջ կերթայ . . .

ՀԱՅ-ԳՈՒՄԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

(ՊԱՇՏՕՄԱՆԱՆ ՏՆՂԵՍԱԳՇԵՐՈՅ)

Ա Ր Ա Բ Կ Ի Ր Ի Շ Ր Ը Ա Ն

1900, դեկտեմբեր

Այս տարի յուլիս 18-ին Արարիկի Է՛ հն էջի կ զիւղը
 յարձակման մ'ենթարկեցաւ: Մտակայ Պարսիստար
 դիւզէն Տէլի Հասան, Թահաս օղու Իսմայիլ, համբաւ-

ւոր շարագործ Սէյիգ Ալի և եղբայրն ու փեսան կը
 կոխեն դիւզն և հրատարակաւ կը յայտարարեն նորն
 զիւղը բնակող մէկ քանի անուր թիւրքերու դուրս չեղնել
 ու հայոց ալ կը սպառնան թէ աւարի պիտի տան զիւղը:
 Մտակայ բլուրներէն գնդակներ կըսկսին տեղալ զիւղին
 վրայ, ամենքն արհաւիրքի կը մատնւին, շարագործներն
 կը մտնեն գիւղին երևելիներէն Ն եր ս է ս ե ա ն Պողոսի
 տունը և վերաւորելով զայն՝ տունը թալանի կուտան:
 Վիրաւորը գիւղէն դուրս կը հանեն՝ սպաննելու դիտ-
 մամբ, բայց անոր աղիկն Աննա՝ 50 լիրայի մօտ ար-
 ժէքով ոսկեղէն զարդերը շարագործներուն փրկանք
 տալով, հազիւ կը յաջողի հայրը ազատել: Այս շիտ-
 թու թեան միջոցին՝ զիւղացիներէն երկու եղբայրք, եր-
 կաթագործ Թորոս և Յարութիւն, օգնութեան կուզեն
 հասնիլ յարձակում կողմերուն, սակայն Թ ո Ր Ո ս կըս-
 պաննուի և եղբայրն կը վիրաւորուի:

Այնայ գայմագամութեան թէև քննիչ մարմին մը
 կը ղրկուի, բայց նա բաւական կը սեպէ այս եղեւնա-
 գործութիւններն վերագրել Տէրսիմի քրդաց և կը վե-
 րադառնայ, իսկ բուն ռքագործներն կը մնան անպատիժ
 և զիւղացիք՝ արհաւիրքի մէջ:

Արարիկի գայմագամին համար, շատ գայթակղական
 դէպքեր կը պատմուին: Հայ կիներու ու աղջիկներու պա-
 տիւն միշտ վտանգի ներքև է անոր անբարոյականութեան
 ու բռնութեան երեսէն: Իրեն սպասաւորող ոստիկանի
 մը ու անբարոյական կնոջ մը միջոցաւ՝ պարկէշտ կիներ
 զանազան հնարքներով ձեռք կանցնէ և զանոնք օր մը
 կամ երկու բանտարկելով իր տան մէջ կը գոհացնէ
 իր կիրքը: Նիւթական զրկումներու մէջ բարոյականի
 այս պաշտօնական յափշտակութիւնն, որու կը հետևին
 միւս պաշտօնատեսներն ալ, զորօրինակ հեռագրական
 պաշտօնայ Ըաքիր պէյ և պանքայի անօրէն Սապրի էֆ.,
 կը լեցնէ ժողովուրդեան կսկիծի չափը:

Որպէս զի փողոցները ամայի մնան գիշերներն ու այս
 շահատակութիւններն կարենայ անտես աչքերէ ի դործ
 դնել, գայմագամը՝ պէլէտիյէի նախագահին հետ միա-
 ցած, գիշերներն, նոյնիսկ ժամը 1-ին, 2-ին (7-8-ին
 ըստ եւրօպականի), իրենց խանութէն կամ դրացիի
 այցելութեան տուն վերագարձող հայերէն 20-25 զըշ-
 անուգանք կառնէ և կամ կը բանտարկէ զանոնք:

Կիներն պէտք կըզգան օրերով իրենց տուններուն մէջ
 փակուելու, ինչպէս մարդիկ կը փակին բանտերու մէջ:
 Ըստեր իրենց ընտանեկան պատիւը փրկելու համար,
 տուն տեղ թողնով՝ կը զողթեն: Գայմագամն անկէ ալ
 նիւթապէս կ'օգտուի, և 1-3 ոսկիի կը վաճառէ անցագրերն:

II

Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ Ի Շ Ր Ը Ա Ն

1900, նոյեմբեր

Տիպրանակերտի կուսակալութեան ներքև գտնւած
 հայ ժողովուրդն 95 ի դէպքերուն անձի և ընչից մեծ
 կարուստներ ունեցած էր, սակայն այս դէպքերուն յա-
 ջրդեցին տեսակ մը հայաճանքներ և խստութիւններ,
 որոնք շատ աւելի դառնացուցին ոգեսպառ ժողովրդեան
 վիճակն: Նահանգին կուսակալը, Խալիլ պէյ, ժողովըր-
 դեան առջև մեծ համակրութիւն չէր վայելել, և իրեն
 դէմ արդէն զանգասներ կային: Իր դիրքը խախտած
 զգալով՝ ուղեց զօրացնել զայն և գտաւ միջոցը այն
 ընդհանրացած դրութեան մէջ, զոր կառավարական պաշ-

տօնեայք ի գործ կը դնեն հայոց նկատմամբ: Առևտուրն այնպէս սկսուեց ցոյց տալ, որ հայոց մէջ իբր թէ խուժարարներ կան և թէ ինք ճարտարութիւն ունի բզբտելու անոնց շարքերը և պաշտպանելու իսլամութեան շահերը: Առևտուրն այս կերպով ուղեց ծառայութիւն մը ըրած ձևանալ կառավարութեան և փառք ու պատիւ խըլը:

Ահսան խուզարկութիւնք կատարել թէ քաղաքին և թէ գիւղերուն մէջ, մուխպիրներու կողմէ տրուած և նոյնիսկ կուսակալին ներշնչմամբ գրեւծ ստալոգ գեկուցագրերու վրայ: Սիլվան, Սեբրէկ, Չնքուշ, Պշերիկ գիւղերն գլխաւոր թատր կը լինին այսպիսի գործողութեանց, և պարկեշտ ու թշուառ գիւղացիներ, որոնց երեւկայութեանն անգամ իրենց բոլոր կեանքին մէջ գոնէ վայրկեան մը չէ անցած ապստամբութեան գաղափարն, խուժար-խուժար կը ձերբակալին ու կը լեցւին բանտերը: Ասոնց տուներուն մէջ թէպէտև ունէ վնասակար թուղթ չգտնուիր, որ փաստ մը ըլլայ այս խուզարկութիւններն արդարացնելու, բայց ամենէն անվնաս թուղթեր, ընտանեկան նամակներ և ինչ, դիտմամբ սխալ կը թարգմանուին ու պատուակ կը դառնան ձերբակալեալները իբր յեղափոխական ներկայացնելու և ենթարկելու ամենախիստ պատիժներու: Եթէ մարդ անգամ մը բանտ նետուի, քաղաքական յանցաւորի անունով, անգատաստան կը մնայ ամիսներով, տարիներով և եթէ վերջապէս դատաստանի ձեւակերպութիւն մ'ալ կատարուի, այն ալ բանտարկեալները մշտնջենապէս դատապարտելու համար է—որը բերդարգելութեան, որը մշտնջենաւոր բանտարկութեան և ինչ Իսկ եթէ պատահի որ մէկ քանի արձակուող լինին, անոնք ալ ֆիզիքապէս ու նիւթապէս կործանած դուրս կեննեն բանտէն: Այսպէս Սեբրէկի Եղիս վարդապետը, քանի մը բանտարկիցիներով անմեղ հռչակելով, արձակեցաւ բանտէն դատարանի վճռով, բայց այս անմեղներն տարիէն աւելի ժամանակ տառապեցան բանտին մէջ, զրկանքներ կրելով:

Տիգրանակերտի բանտին մէջ կան այժմ այս կարգէն 50 բանտարկեալք, որոց մէջ կը գտնուին չնքուշի Տէր Արապետ ծերունի քահանայն, դատաստուներ և որ աւելի ցաւալին է դպրոցական 10-12 տարեկան պատանիներ, որոնք չարագործներու մէջ դրուած են և կարելի չէ եղած զանոնք ազատել: Պատանի մ'ալ 17 տարեկան բերդարգելութեան դատապարտուած է:

Այս բանտարկութիւնները կառավարութեան ձեռքին կը ծառայեն նաև իսլամ ժողովուրդը հայոց դէմ գրողութիւն, որու պատճառաւ հայերը արհաւիրքի ենթակայ կը լինին միշտ:

Բալուրի գայմագամն ալ որ կը գտնուի նոյն կուսակալին իրաւասութեան ներքեւ, իր կարգին կը հետեւի միւսնոյն դրութեան: Ինքն է որ փակած է Բալուրի Ս. Ասուածածնայ վանուց մէջ բացուած որբանոցն և դուները կնքելով դուրս հանած է որբերն հետեւեալ պարագաներու մէջ: — Բալուրի աղագեցիկ անձերէն Քիւշիկ և Սայիտ պէյեր կուզեն տիրանալ նոյն վանքին սեփական արտերուն և բերքերուն: Գայմագամը կը ստանան զործը և անոնց հետ անձամբ վանք երթալով ամբարանոցին դուները կը խորտակէ, վանքին և որբանոցին ուտեստի ձմրան պաշարը դուրս հանել կուտայ ու կը յանձնէ այս պէյերուն, կը գանակոծէ փոխ-վանահայր Տ. Արապետ քահանայն և որբանոցի սպասաւորը, որք յանդիներ

էին գանգատելու այս բռնութեանց համար, կը ձերբակալէ նոյն սպասաւորը և վանքին մօտակայ Հալալ գիւղի հայերէն մէկ քանին, քաղաք կը տանի կալանաւոր, կառավարական պաշտօնասան մէջ կը ծծէ և բանտարկել կուտայ գանոնք: Ար. կանչէ նաև Բալուրի առաջնորդական տեղապահին փոխանորդը Տէր Սուրէն քահանայն և ըսելով թէ իր արարքները նա ինքն է որ կը տեղեկագրէ առաջնորդին (որ Մէրտին կը գտնուի), ձեռքը աւորձանակին կը տանի և կը սպասուայ սպաննել զինքը, հայհոյելով անոր կրօնքին և մեծերուն: Թէպէտև Մատենի մութեսարիֆն կը տեղեկանայ եղելութեան և յատուկ քննիչ մը կը ղրկէ Բալուր, բայց գայմագամն բռնական միջոցներ ձեռք կ'առնէ, և այսպէս սարսափահար ընելով կը յաջողի զամենքը լռեցնելու և քննութիւնը ի դերև հանելու:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Վ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՏՄՄՆԱՆՑՑՐՈՐԻ ՆՄՄԱՆ

Պետերբուրգ, 8 յունիս

Մի օր — հազագիւտ են այդպիսի գեղեցիկ օրեր — Լեհաստանի մայրաքաղաքի կառավարիչը, իր ստորագրեալների հանդիսաւոր ընդունելութեան միջոցին, շքեղ համազգեստների մէջ ձգուած աստիճանաւորներին այս անսպասելի հարցը ուղղեց.

— Գիտէք արդեօք տեղական լեզուն...

Ոչ մի չըթուանք չչարժուեց: Եւ «այո՛ւ» բառը, այնքան սովորական ցարի ծառայողների բերանում, այդ անգամ չլուեց խոնարհ բերաններից:

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին միմեանց ուսական պաշտօնեաները մի քանի օր շարունակ դիւանատան միջանցքներում կամ փողոցում հանդիպելիս: Պատասխանի փոխարէն ուսեր էին վեր քաշում եւ նրանցից ամենահամարձակները — թէև շատ հազագիւտ — վճռեցին, իհարկէ, իրենց սրտի խորքում միայն, որ «նորին գերազանցութիւնը երևի շուտով պետական խորհրդի անդամ կը նշանակուի, շատ է ծեր»...

Իբրևուրք ունէին: Այդ օրինակ «խելաւ» հարցեր տալու համար ուսաց պետութեան մէջ կամ պիտի լինել շատ «ջահիլ» — համանիշը՝ անդգուշութեան և ազատամտութեան, և կամ շատ «ծեր»՝ համանիշը թուլութեան կամ տխմարութեան... «Ջահիլ» թէ «ծեր» էր վարչապալի նորեկ կառավարիչը — դա մի հարց է, որ մութ է մնացել...

Մութ չէ միայն այն, որ այդպիսի «ջահիլ» կամ «ծեր» երբէք չէ անցել կովկասեան լեռնաշղթան, որովհետև կազգեկի և Մասիսի ստորոտների դարևոր տարեգրութեան մէջ ոչ ոք չէ յիշում — անկարելի է յիշել մի բան, որ տեղի չէ ունեցել — որ երբէք ունէ պաշտօնեայ, կառավարչապետ թէ նահանգապետ, դատարանի նախագահ թէ փոստային մի կառավարիչ, իր ստորագրեալներին ընդունելիս հարցնէր նրանց. «Ի՞նչէք արդեօք հայոց կամ վրաց լեզուն»: Կարող է արդեօք այդպիսի մի հարց տեղ գտնել աստիճանաւորի նեղ գլխում, որը մի բան է ուսել և մի բան միայն գիտէ,

այն՝ որ աշխարհի երեսին մի լեզու միայն կայ, ուսաց լեզուն— ոչ իհարկէ Կարամզինի կամ Պուլչինի լեզուն, այլ ուրիշների և կնուտի լեզուն, որով ամենքը պիտի խօսեն. ով գիտի՝ նա կը խօսի. ով չգիտի՝ թող լռի. . . Եւ ինչո՞ւ խօսել, քանի որ ամենալաւ հպատակը նա է, որ լուռ է և այն էլ՝ միշտ. . .

Անտեղեակ դատողը կարող է կարծել, որ հարիւր տարւայ ընթացքում ուսաց լեզուն այնքան տարածւել է և այնքան ժողովրդականացել է կովկասեան ազգերի մէջ, որ կարելի է այդ լեզուով կառավարել դատել այդ լեզուով օրէնք գործարդել, ցաւեր իմանալ: Երբէք: Տեղը չէ այստեղ մտնել այդ երևոյթի պատճառների մէջ: Բաւականանանք փաստը արձանագրելով: ասէ՞ողջ գաւառների ազգաբնակչութիւնը նախկին Ղրատաւում կամ Հայկական նախկին նահանգներում— վրացիներ, հայեր, թիւրքեր— դեռ ևս շատ տեղ մի խօսք անգամ չգիտէ այն լեզուից, որով մի դար է հրամայում են. . . Եւ եթէ մի օր, ուէ պատճառով ապստամբ Կովկասը դէն նետէր ուսաց միապետութեան լուծը, երեք օրւայ մէջ անհետ կը լինէր դարևոր տիրապետութեան վերջին նշանը և գուցէ ուրիշ ոչինչ չէր մնայ, բայց եթէ զօրանոցների հաստ պատերը և ուղղափառ տաճարների սոխաձև գմբէթները. . .

Յնորք էր իհարկէ երևակայել անգամ, թէ երբևիցէ ուսաց գահի ժառանգը, այն երկար տարիների ընթացքում, երբ նա ամենայն խնամքով մարգուլթիւններ է անում, թէ ինչպէս պէտք է ձեռք տալ պազնել կամ պարել, երբ նա ամեններով վարժուում է գեղեցիկ կերպով իր անունը ստորագրելու «պետական պարտաւորութեան» մէջ—ցնորք է, ասում ենք, երևակայել, որ նա մտածէր մի քանի ժամ գոնէ ներքելու լեհական կամ հայոց լեզուի ուսումնասիրութեան, եթէ ոչ իբրև արքայական պարտաւորութիւն—արքաները պարտաւորութիւն չեն ճանաչում—գէթ իբրև յարգանք դէպի այն հպատակ ազգութիւնները, որոնք խօսում են այդ լեզուներով. . . Ներկայ օրերում ցնորք է և այն գուցէ, որ մինիստրի վրայ պարտք դրւէր ծանօթ լինելու պետութեան կազմի մէջ մտնող գլխաւոր ազգութիւնների լեզուներին, հարկաւոր դէպքում նրանց դարգերը անմիջապէս լսելու համար: Բայց միթէ՞ ցնորք պիտի մնայ և այն տարրական միտքը, որ Կովկաս եկող պաշտօնեան, եթէ ոչ մի փոխարքայ կամ կառավարչապետ, որ իր պալատից հաղիւ է ոտքը դուրս դնում, գոնէ նահանգապետը, գաւառի կառավարիչը, դատաւորը, ոստիկանապետը, որոնց պարտաւորութիւնը ամէն օր նրանց կանգնեցնում է երես առ երես երկրի ժողովրդի հետ, իմանային այդ ժողովրդի լեզուն, որին ուղարկած են կառավարելու, չենք ասում ծառայելու, որովհետև Ռուսաստանում պաշտօնեան չէ, որ ծառայում է ժողովրդիին, այլ ժողովուրդը պաշտօնեային: Սակայն այդ տարրական կարծիքն մնաց և մնում է ցնորքն էր ի շրջանում, և այն էլ վտանգաւոր ցնորքների: Եւ ի՞նչ բերւաւոր չարիքներ չծնւեցին այդ դժբախտ կացութիւնից:

Ահա դատարանում ենք:
Դահլիճի մէջ միջանցքներում խուճած է ժողովուրդը. — լեռնական վրացիներ, գիւղերից եկած հայեր, սարերից իջած թիւրքեր: Գլխափաթաթ կանայք, սպիտակահեր ծերունիներ՝ նահապետական միամտութիւնը երեսներին, մատաղ երեխաներ՝ երկչոտ, անհանգիստ հայեացք-

ներով: Ամենքն էլ կուչ են եկել: Դողը բոլորի սրտումն է: Սպասում են ժամեր, օրեր: Նրանց մի սենեակից միւսն են քշում, մի միջանցքից մի այլը: Տւած հարցերին ոչ ոք չի պատասխանում: Նրանց ոչ ոք չի ուզում հասկանալ: Ահա և դատաւորները՝ կամ քնաթաթախ աչքերով, ամբողջ գիշերւայ թղթախաղից, կամ կատաղի ինչպէս տանջած գայլը, ով գիտէ, ընտանեկան ինչ դրամայից. . . Շարւած են խեղճերը իրենց դատաւորների առաջ: Մահւան և կեանքի խնդիր է: Սակայն նրանք մի բան անգամ չեն հասկանում: Տգէտ, անուս թարգմանը թարգմանում է ինչպէս և ինչ կամենում է: Եւ ահա մի ժամից յայտարարում են՝ «Բոլորն էլ ճանաչւած են մեղաւոր—աքսոր Սիբիր»: Աճիւռը նոյնպէս պէտք է թարգմանել: Եւ դեռ թարգմանութիւնը չարած, դեւերի նման բուսնում են զինւորները, քշում են անխօս, անլեզու մեղադրւածներին, ինչպէս անասուններ: Ո՛ւր — նրանք էլ չգիտեն. . . Եւ ինչո՞ւ համար: «Իշխանութեանը դիմադրութիւն ցոյց տալու համար» — ասում է թարգմանը: Դիմադրութիւն իշխանութեան: Ո՛ւր. ե՞րբ. . .

Ահա գիւղում ենք:
Հինականները դողի մէջ են. փողոցներից մարդիկ փախուստ են տալիս, կարծես մտալուս փոթորկից, միայն տանուտէրն է երևում, գունատ շշկւած, նշանը վզին: — Ի՞նչ է պատահել: Սպասում են գաւառապետին: Ահա և նա, գաւառի ցարը: Կէս ժամից՝ «հարայ-հրոցը» գիւղն է տիրել: Տեսարանը թիւրք փաշաների գալուստն է յիշեցնում: Եսասուլները կազակների հետ գեղն ընկած՝ հաւեր են հաւաքում, իւր են պահանջում, լաւ գինի են որոնում. . . Եւ եթէ ձրի չեն տալիս, կամ քիչ են տալիս, մտրակը պատրաստ է: Ծեծ, հայհոյանք, կոխ: Տանուտէրը փորձում է գանգատել: Գաւառապետը չհասկանալու է դնում: Ահա. յանկարծ մի սրտակոտոր ձիւ, պառււ գեղջկուհին, կատաղութիւնը դէմքին, հրացայտ աչքերով, դէպի մեծաւորն է վազում: Գանգատ ունի, — եսասուլները նրա հարսի պատին են վերաւորել: Նա գոչում է, նա շանթեր է արձակում. . .

— Հաւերս էլ, կովս էլ, սաղ տունս էլ թող տանեն, թագաւորին ղուրբան, բայց հարսիս հետ ի՞նչ գործ ունեն այդ անհաւատ, գետին մտածները. Աստու՛ կրակը դրանց գլխին. . .

— Ի՞նչ է ասում, որոտաց սենեակից գաւառապետը:
— Հաւի փող է ուզում, բացատրում է խորամանկ թարգմանը. . .

«Ծեծահոգի» գաւառապետը բան կոպէկ շարտեց խեղճ գանգատաւորի առաջ գոչելով.

— «Լեցրէ՛ք»: Եւ մտրակները լուցրին բողբոջին: Արաւոր կինը յետ մղեց, արիւնտա, կապտած մարմնով: Մտրակը խաղաղացրեց վրդոված, բողբոջ հոգին. . .

Կառավարչապետի պտոյտն է:
Գաւառները տակն ու վրայ են. նահանգապետը քուն չունի. գաւառապետները ոտքի վրայ: Որտեղով պիտի անցնի — ոչ ոք չգիտէ: Կամուրջները նորոգում, ճանապարհները կարգի են բերում: Ահա և նա, գաւառական փողբիկ քաղաքում: Ծերունի է, գլուխը արդէն ճաղատ, կորացած, յենւած իր ձեռնափայտի վրայ: Կանգնած հրապարակի վրայ, շրջապատւած նահանգի բոլոր մեծերով ժողովրդի ցան ու դարգը, գանգատը ու տենչն է ուզում իմանալ: Ամբողջ լարւած է. . . Լսում են յուզւած ձայներ, բացականչութիւններ.

— Չենք ուզում. մեր նաչալնիկը (գաւառապետը) մեր տունը քանդեց, չենք ուզում, կաշառք տալով մեր հոգին ելաւ. չենք ուզում, . .

— Ի՞նչ են ասում:

Գաւառապետը առաջ եկաւ, նայեց թարգմանին, աչքերը գցեց նա հանդապետի աչքերին և պատուի կանխներով կառավարչապետի առաջ, հանդիսաւոր կերպով արտասանեց.

— Ձերդ պայծառափայլութիւն. ասում են, որ դպրոց չենք ուզում, փող չունենք, ծախքը չենք կարող հոգալ. . .

— Ի՞նչպէս, դպրոց չենք ուզում. Ես հրամայում եմ: Մինչև վեց ամիս շինութիւնը պատրաստ պիտի լինի: Յայտարարեցէք. — ասաց, նստեց կառքը, ձեռքեց ամբողջ և սլացաւ հեռու: Աւ թիֆլիս դարձած, նա շտապեցրեց դէպի Պետերբուրգ իր զեկոսցումը, որ վերջանում էր այս խօսքերով. «Անձամբ և տեղիւստեղը ուսումնասիրելով ազգաբնակչութեան կարիքները. . . և ինձ»:

Ձինւորակոչ է:

Գիւղի ահագին հրապարակի վրայ ծովացած է ամբոխը: Մէջտեղը, մի պատուանդանի վրայ, կանգնած է գաւառապետը: Ձինւորագրութեան սկիզբի տարին է, և նա, յանուն «արգար օրէնքի», բացատրում է ժողովրդին թէ ինչպէս պէտք է վիճակ հանել և ով է զինւոր դնում: Ծողովուրդը աշկոծւած է. անխտաճութիւնը թափանցել է մինչև նրա հոգու խորքը: Նա չի հաւատում. նա կասկածներ է անում: Եկեղեցու բակում, ջրի ճանապարհին առասպելներ են պատմում: Եւ ինչո՞ւ չպատմեն. նոր օրէնքը ոչ որ չի ուզում բացատրել, ոչ որ լուրերի առաջը չի ուզում առնել:

— Ահա այսպէս—կրկնում է գաւառապետը ամբոխին—ամէն մէկը ձեռքը կը կոխի այս արկղի մէջ և կը հանի մի տպած համար (պէջատնի նոմեր):

— Արան ասում է որ — թարգմանում է թարգմանը — ամէն ժարդ ձեռքը կը տանի և կը հանի փէջատած թուղթը *):

— Ա՛ւր է, ո՛ւր փէջատած թուղթը—գոռում են մի քանի կողմից,—փէջատած չի, խաբում էք. բաց է:

Գաւառապետը չհասկացած յուզման պատճառը, զայրոյթի նշաններ է ցոյց տալիս: Ձայրոյթը աւելի է յուզում ամբոխը, և թիւրիմացութիւնը վերջանում է. . . մտրակահարութեամբ:

«Լեզւաբանական տանջանքները», — դա մի ո՞ճ է յատուկ միայն Աովկասին—հեռուում են տեղական ազգաբնակչութեան և այդ հիմնարկութիւններից դուրս, աւօրեայ կեանքի ամէն մի քայլի վրայ Գիւղացի մի հայ նամակ ունի ուղարկելու իր որդուն, որ Բագու է. նա իրաւունք չունի հայերէն գրել. պիտի թողնի գործը, մի օրւայ ճանապարհ անցնի, քաղաք գալ, դիմի մի ծանօթի կամ անծանօթի, աղբւսի, որ նրա նամակի հասցէն ուսերէն գրեն: Մի հասցէի համար մի ամբողջ օրւայ կորուստ. . .

— Պառաւ, որդու կարօտ մայրը բանտ է եկել տեսնելու որդուն: Նրա սիրտը տապալուում է, նա առաջ է վազում, որ մի խօսք ասի, մի խօսք լսի զաւակից: Բայց ուս պահապանի կոշտ ձեռքը նրան յետ է հրում. «ուսերէն խօսեցէք»: Եւ խեղճ մայր ու որդին ստիպած են աչքերով խօսել լուութեան մէջ որոնել իրենց:

*) «Փեջատած» ժողովուրդի հասկացողութեամբ նշանակում է «վերած», մինչդեռ խօսքը տպած թւանամարի մասին է, որ ինքը թարգմանը չի հասկանում:

կարօտը, յոյզերը. . . — Գիմնազիայում երեխան հարց ու փորձի է կանչւած. տեսուչը սպառնում է նրա «վարքը» պակասեցնել: Ննչո՞ւ: Տեղեկացել է, որ մի քանի հոգի հայերէն կամ թիւրքերէն են խօսում իրար մէջ:

— Հազիւ քո «եանցի» խնդիրը վերջացաւ, հիմի էլ հայերէն են խօսում—նկատում է վրդովւած տեսուչը: Ի՞նչ «եանցի» խնդիր է, կասէք դուք: — Դա հայկական ազգանունների վերջաւորութիւնն է, որ յիշուի դարձել է մի պետական խնդիր քաղաքականութեան սիրահարների համար: Դպրոցներում մանաւանդ—էլ չենք ասում վարչական հաստատութիւններում— ստիպում են գործ չածել «եանց», այլ դրա տեղ ուզի, հակառակ ազգանուն տիրոջ ցանկութեան: Դրա ճնորհիւ է որ նորն անունը, որ հայոց շրջաններում էէր Պետրոսեան է, գիմնազիայում դառնում է Տէր Պետրոսով, Կարապետեանը՝ Կարպով, Գրիգորեանը՝ Գրիկով: Ծաղր մի կարծէք: — «եանցի» խնդիրը դեռ իր ամենաչինով շրջանում է և թէև ծնունդ է առել 19-րդ դարում, այնուամենայնիւ բոլոր նշաններին նայած՝ պիտի դեղնի միապետութեան գործակալներին և ներկայ 20-րդ դարում. . .

Շատ տարիներ առաջ ուսական տիրապետութեան նախկին շրջանում, երբ ամբողջ նահանգներ դուրս էին մի հատիկ ուսերէն իմացողից անգամ, կառավարչական կարգադրութիւն եղաւ պաշտօնական թղթերը գրել բացի ուսերէնից, նոյնպէս և վրացերէն, հայերէն ու թիւրքերէն լեզուներով. սակայն դա միշտ մնաց և մանաւանդ այժմ մնում է իբրև մեռելածին մի ձև, որը նոյնիսկ իբրև ձև հալածեց, երբ կառավարութեան ղեկը անցաւ այս կամ այն «անողր» կազմաստեացի ձեռքը և երբ սկսեց նոր քաղաքականութիւնը. . .

Այս քաղաքականութեան նպատակն է, իհարկէ, և այն, որ որքան կարելի է շուտով, արագօրէն վերացնուի տեղական լեզուի ու կարևորութիւնը և աշկարայ դարձնուի նրանց անպէտքութիւնը ու կործանուի: Եւ իրօք: Պաշտօնական կանխիկ չափը, վրացին իրենց լեզուն սիրել կարող են միայն պլատոնական, վերացական սիրով: Գործնական կեանքի մէջ նա անարժէք է: Նրան հալածում, նրան ծաղրում, նրան անպէտք են համարում: Ինչքան էլ գիտնական լինէք հայոց կամ վրաց լեզուի մէջ և ինչքան էլ կատարելագործւած այդ լեզուներում, ձեզ չեն թոյլ տայ մի քայլ անգամ անել ոչ դատարանում, ոչ հասարակութեան մէջ, ոչ փոստում, ոչ ուր որ վարչատան մէջ: Շատ անգամ նոյնիսկ տեղական լեզու իմացող պաշտօնատերերին արգելւած է խօսել այդ լեզուներով և եթէ մէկը խօսում է, նրա վրայ «ծուռ աչքով» են նայում: Շատ կան հայ պաշտօնատերեր, որոնք ոչ միայն իրենց «եանցը» դարձրել են ուզի, այլև ամենայն եռանդով աշխատում են ցոյց տալ, որ նրանք չգիտեն իրենց մայրենի լեզուն, չեն կարողում հայերէն լրագիր կամ գիրք: Եթէ «մեծը» իմանայ, որ իր ստորագրեալ հայ պաշտօնատեր իր որդուն կամ աղջկան տուել է հայոց դպրոց—նրա մասին լաւ կարծիք չի տայ իշխանութեան: Հայ հարուստը կամ վրացի ազնւականը, եթէ ունի կապ ունի կառավարչական հիմնարկութիւնների հետ, շատ անգամ ստիպւած է ունի ազգային հիմնարկութեան նւեր արած միջոցին, մի բան էլ նւերել օրինակի Աւղափառութիւն տարածելու ընկերութեան, որպէսզի

յիսենթ՝ Հայրեայցիների նիւթ չդառնայ: 1892 թւին, Թիֆլիսում, մի Հայ պաշտօնեայ կառուցեց մի տուն և, կամենալով քար ու ցեխի մէջ էլ ցոյց տալ իր հաւատարմութիւնը, տան ճակատին ահագին տառերով գրեց. «Տէր, պահե՛ա՛ր զկայսրն մեր»... Եւ իբրև վարձատրութիւն՝ նրա տունը թանկ գնով վարձեցին նահանգական վարչութեան համար:

Ահա թէ ինչ զազիր, անբարոյականացուցիչ միջոցներով վարձեցնում են ամբողջ սերունդներ՝ քծնելու, ստորանալու արհեստին — մի սերունդ, որ առանց այն էլ լի է բարոյական արատներով:

Այդ ուղղութիւնը այնքան ծայրայեղութեան է հասել, որ ամէն մի պօլիցմէյստէր իր անժխտելի պարտք և իրաւունքն է համարում արգելել վաճառականին կամ արհեստաւորին իր խանութի ցուցանակը իր մայրենի լեզուով գրել: Պիտի ուսերէն լինի. փոյթ չէ թէ անցորդը անկարող է այդ լեզուով մի կօշկակար, մի մահուդի խանութ կամ մի դեղատուն գտնել:

Աւելին: Աճուկան կերպով արգելում են, դիցուք, քաղաքի ուէ փողոցին տալ մի նշանաւոր վրացի կամ հայ գործիչի անուն, կամ ուէ գրագարան հիմնել մի տեղացի գործողի անւամբ: Երևանեան նահանգի գիւղերից մէկում ուղեցին բանալ մի գրագարան Գրիգոր Արծրունու անւամբ: Արգելեցին: Ստիպեցին ընտրել Պուշկինի անունը. թոյլ տուցին: Իհարկէ, ոչ այն պատճառով, որ անմահ Պուշկինը — որի անունը այդ գիւղում առաջին անգամ էին լսում — սիրելի էր հակապուշկինեան նահանգապետին, այլ այն պատճառով, որ «յամենայն դէպս» նա ուս է... Այդ իսկ պատճառով ոչ որի մտքով անգամ մինչև այժմ էլ չէ անցնում, օրինակ, խօսք բանալ Թիֆլիսի ուէ հրապարակի կամ փողոցի վրայ մէկ արձան կառուցանելու կովկասեան այնպիսի գործողների յիշատակին, որոնց անունը միշտ պիտի կազմէ այդ գեղեցիկ երկրի վշտալի պատմութեան պարծանքը: Դա կը համարուի ցոյց կառավարութեան դէմ, դա կը նկատուի յեղափոխական փորձ...

Դրա փոխարէն երևի մօտիկ ապագայում կովկասեան քաղաքների հրապարակները կը սկսեն զարդարել այնպիսի գեղարարական և կառավարիչ նշաններով, որոնց միակ մեծութիւնը եղել է կամ արիւն թափել կամ ստրկացնել, որոնց անունը կովկասեցին կը ծածկէր, եթէ ազատ լինէր, միմիայն անարգանքով և ատելութեամբ: Արատանի միացման 100-ամեակի «պաշտօնական» տօնախմբութիւնը, որ պիտի տեղի ունենայ սեպտեմբերին, առաջին նշանն է այդ տխուր հանդիսարանի...

Կը բարձրացնեն Գեւորդեան գլխարկները և կը ստիպեն ժողովրդին գլուխ խոնարհեցնել...

Հելվեցիան Աիլհէլմ Տէլլ ծնեց՝ այդ անարգ գլխարկը ոտի տակ տալու համար...

2րդ ծնւի արդեօք մի նոր Աիլհէլմ Տէլլ այն վիթխարի լեռների ստորոտում, ուր ըմբոստ Պրօմէթէօսը երկնքի կրակը խլեց...

Է. ԱԿՆՈՒՆԻ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Ե Ր Ո Ր Ա Ղ Ր Ի Ի Ր

(Շարունակ. — Տես N 4)

Սերոբ իր կուռղի անզուգական տաղանդին հետ ունէր նաև կազմակերպողի ձիրք և ընդունակութիւն: Ոչ միայն մարտական խուճաբ կազմակերպեց, զինուորական կարգապահութիւնով և հնազանդութիւնով, այլև իր գտնած շրջանակին մէջ փորձեց տեսակ մը ինքնավարական դրութիւն հաստատել: Ախլաթի ամէն-մէկ գիւղի մէջ բանիբուն և ձեռնհաս անձինքներէ կազմած մարմիններ ստեղծեց, որոնք՝ իրենց իրաւասութեան տակ՝ բոլոր յարաբերական կամ քաղաքային գործեր դատելու և վճիռներ տալու իրաւունք ունէին, փոխանակ կառավարութեան տնարանդ: միջամտութեան դիմելու: Նոյնիսկ եթէ ոճիր պատահէր, իրենք իրենց ձեռքով կը վերջացնէին: Միմիայն ամենածանր և կնճռոտ պարագային, երբ տեղական ինքնօրէն գատարաններ անկարող ըլլային վճիռ մը տալու, կը դիմէին Թ... Բիււօյին կամ տեղական լեզուով, Աբրօսական ժողովին, որու նախագահն էր ինքը Սերոբ, և իբր գերագոյն ատեան, անոր վճիռը բացարձակ էր: Այնպէս եղաւ որ ոչ մէկ գիւղացի չէր մտաբերեր ուէ գործի համար կառավարութեան դիմել անոր արդարութիւնը պղծելու համար: Սէր, միութիւն և եղբայրութիւն զգալիօրէն իրենց լուս երեսը կը ցցնէին Ախլաթ գաւառի մէջ. խռովութիւնները, անկարգութիւնները կը սկսէին անհետանալ. ժողովուրդը բարելու դրութեան մէջ իր հացին ու ջրին տէրն էր, շնորհիւ այն ապահովութեան, որ հայ յեղափոխականները ստեղծած էին և որուն առջև հակառակորդ թշնամիներն իսկ, ամօթահար և պատկառոտ, չէին վարաներ իրենց համակրանքը և գոհունակութիւնը յայտնել և եթէ ուէ դատ ունենային՝ կամ չնային կառավարութեան միջոցով տեսնել: Մինչև վերջերը այսպէս էր նաև Սասունի մէջ:

Այսպէս Ախլաթ գաւառի վարչական վերին հսկողութիւնը կախած էր Սերոբէն, որ կը կառավարէր երկիրը երբեմն իր այցելութիւններով: շատ անգամ ալ թըղթակցութիւններով: Սերոբ, իրաւ է, մանկութենէն կարգալարել չէր սորված, բայց պանդխտութեան մէջ բաւականաչափ զարգացած էր. կը գրէր պարզ նամակներ, տոմսակներ և ստորագրելէն յետոյ ալ կը կնքէր իր արծաթէ մատնիով, որ Ա. Ս. սկզբնատուերը կը կրէր: Թերթեր, գրքոյկներ շարունակ կը կարգար և պարզ ու ամենալուրջ նկատողութիւններ կընէր: Իր կարծիքը բազմաթիւ բանիմաց և ի նտ է լի կ է ն տ ընկերներու կողմէ սիրով և հիացմունքով կը գնահատուէր:

Բայց երթալով Աղբիւրի և իր քաղաքի խմբին գոյութիւնը կառավարական շրջանակներու մտատանջութեան նիւթ կը լարուի: Մէկ օր՝ Պօլէն կտրուկ հրահանգ եկաւ որպէս զի ողջ կամ մեռած, ինչ գնով ալ ըլլայ, ձեռք ձգուի ապստամբ հայը, որուն համբաւը օրէօր կը մեծանար, հիացում և սոսկում պատճառելով:

Կառավարութիւնը նախապէս զգուշացաւ ձայնը դուրս հանելու և եւրօպական ներկայացուցիչներուն ուշադրութիւնը չհրահարելու համար: Հայերէ և թիւրքերէ գաղտնի յանձնաժողով մը կազմեց, որուն անդամները գեղէ

գեղ ման դալով գիւղացիներէն խոստում ու ստորագրութիւն կ'առնէին որ Սերոբին և իր խմբին ունէ օտանդակութիւն չընեն և չի հիւրընկալեն:

Օգուտ չըրաւ:

Այդ օրէն կառավարութիւնը բացարձակ և անողորմ կերպով սկսաւ հալածել այդ հայ կտրիճներու խումբը, որ հայ յեղափոխութեան անսպառ կորովը կը մարմնացնէր մեր թշուառ հայրենիքին մէջ: Այդ յուսահատ հալածանքները տեղի տւին շարք մը ընդհարումներու, որոնց մէջ հայ յեղափոխականը ցցուց իր բարոյական ու ռազմական առաւելութիւնները:

Ընդհարումներու այդ շարքին մէջ նշանաւոր պիտի մնայ 1898 հոկ. 20-ի կռիւը:

Այդ օրը Աղբիւր և իր ընկերներէն 16 հոգի կը գտնուէին Բարչէն (Բաղէշէն կէս ժամ հեռու), ուրիշ պիտի անցնէին երթալիս: Մասնութեան մը վրայ կառավարութիւնը լուր առնելով՝ իսկոյն ջոկատ մը զօրք կը ղրկէ, որ առտուն կանուխ կուգայ, կը պաշարէ գիւղին չորս կողմը և շրջակայ սարերը:

Աղբիւր, անցած-գարձածէն իրագրել, կաճապարէ դուրս ելելէ իր թաքստոգէն կուրի յարմար դիրքեր գրաւելու համար: Թշնամին դանձր տեսածին՝ կրակի կրակ ընէր:

— Տղաք, կը պոռայ Աղբիւր, կուեցէք և դիմացի քարերը բարձրացէք:

Հայ քաջերը թշնամիի կրակին տակէն անվրդով գիւղին դիմաց՝ բլուրները կը մագլցին: Այդ միջոցին հայ տղոց մեկուն ոտքը թեթև կը վերաւորուի:

Անգամ մը, որ կը հասնին թաքստի տեղերը և դիրքեր կը գրաւեն, այլևս իրենք կըսկսին կարկուտի պէս կապար տեղաբ: Ամբողջ 2 ժամ կը տևէ կռիւը, բայց թիւրքերը կեցած տեղերնին գամւած՝ դուրսնին չեն կրնար վեր բարձրացնել: Հրամանատարը, կատղած, քաղաք կը վերադառնայ թնդանօթ և նոր զօրք բերելու:

— Ի՞նչպէս եղաւ, կը հարցնէ կուսակալը, պիտի բռնէք, խորտակէք այս անգամ թէ ոչ:

— Վամ կը կոտորենք ամէնքն ալ կամ ողջ կը բռնենք, այս անգամ ձեռւընուս չեն աղատիր, կը պատասխանէ հրամանատարը:

Օգնութեան հրաւերին վրայ՝ շրջակաները եղած բոլոր քիւրդերը, նոյնիսկ խուժանէն մաս մը, ձեռքը անցած զէնքով, վազեր եկեր էին Բարչէն Սերոբ փաշան ձերբակելու համար:

Բայց այդ անխորհուրդ և մոլեռանդ ոգևորութիւնը շուտ սմբեցաւ: Ֆէդայիներու սուղոյ գնդակները տարտըղնած էին այդ ամբոխը, որ մահաւան սոսկումը ունէր: Խուճապը ահաւոր և ծիծաղելի էր միանգամայն:

Ժամը 6 էր, երբ թնդանօթներու առաջին որոտը սկսաւ արձագանքել լիւններու լանջերուն վրայ:

Վանոնաւոր զօրքը կատաղի կը կուէր, մինչ մէկ կողմէն անընդհատ ռազմամթերք կը հասցնէին քաղաքէն: Իսկ ֆէդայիները իրենց մօսիները կը շտկէին ուղղակի թընդանօթաձիգներուն վրայ, որոնցմէ քանինս գլորեցին, այնպէս որ այլևս ոչ ոք սիրտ կընէր նորէն լեցնել պարպած թնդանօթները, որոնք պատերազմի դաշտին վրայ անգործ կը յորանջէին: Բանի մը անյաջող փորձերէ ետք, հազարապետը կը հրամայէ ջոկատին միահամուռ արձակել հրացանները, որոնց մեծագորդ որոտումը կը թնդացնէր սարձոր: Օգուտելով այդ արվկալից միջարդէպէն, թնդանօթաձիգները կաճապարեն կերպով

մը լեցնել թնդանօթները: Ռուսները կը սուրան, կը թռչին: Ֆէդայիներու գլխուն վրայէն առանց անոնց վնասելու: Հայ հերոսները աւելի ու աւելի կողակորուին և իրենց շեշտահար գնդակները դիտապաստ կը փռեն թնդանօթաձիգներէն չորսը, որոնցմէ մէկը, իբր պետ, մեծ յարգ կը վայելէր կառավարութեան մօտ:

Թիւրք հրամանատարը, շուարած ու կատաղահար, թնդանօթներուն անզօրութիւնը տեսնելով, հրաման կընէ բանակով գրոհ տալ ափ մը քաջերուն կեցած դիրքերուն վրայ:

Զօրքը հազիւ առաջ կը խաղայ, հայ գնտակներու տարափին տակ հասած տանձի պէս կը թափին նախայարձակները: Ասոր վրայ յուսահատօրէն զօրքը կը նահանջէ, անիծելով հրամանատարը, և սրտին մէջ ուստելով ուրիշ անգամ «ջան ֆէդայիին» վրայ շերթալ:

Վուրը կը շարունակուի հեռաւորութեան վրայ, բայց աւելի պաշտպանողական և պաշարողական դրութիւնով: Աղբիւրին խրախուսական խօսքերը առիւծի կը փոխէ հայ կտրիճները, որոնք ուրախ-ուրախ կերպէն ու կը կուրին, թշնամին գնդակահար ընելով: Ժամը 10-ին մօտերը՝ թշնամիի գնդակ մը գլխէն կը զարնէ բուլանդի ընկեր Սարգիսը. քաջը անշունչ կը կքի և կաւանդէ հոգին: Քովը ընկերը լուր կուտայ Աղբիւրին:

— Սարգիսը չի գիտեմ քնաւ, ի՞նչ եղաւ:

— Բան չկայ, ան թող քնէ, դուք կուեցէք, կը պատասխանէ Աղբիւր:

Վուրը անգուլ մոլեգնութիւնով կը տևէ մինչև իրիկուան մութը, և թշնամին պատկառելի հեռաւորութեան մը վրայէն քայլ մը առաջ չի կրնար գալ:

Հեռանալու ժամանակն է: Մերկները չորս կողմէն պաշարած են. թշնամին իր ներկայութիւնը կը մատնէ վարենի աղաղակներով, իր զոհ տուած անչափ դիակներու տեսքէն մոլեգնած:

Աղբիւր կը հաւաքէ իր ընկերները բոլորը միասին և անշունչ՝ դիրքերու մէկ կողմէն վար կիջնին, որպէս զի եթէ պատահին թիւրքերու՝ զարնեն անցնին: Սակայն ապահով կը յաջողին կտրել շղթան, երբ թշնամին միամտօրէն կը շարունակէր տակաւին գնդակոծել ամայացած դիրքերը:

Այդ դիւցազնական և անմահ կուրին մէջ՝ Սերոբի ընկերներէն մինակ բուլանդի Սարգիսը կրապանուի և երկու ընկեր ալ թեթև կերպով կը վերաւորին: Թըշնամիին կորուստը 30-էն աւելի էր:

Վուրն օրը քաղաքին ամբոխը կը յարձակի հայոց խանութներուն վրայ կողոպտելու համար. հայերը կը դիմադրեն, երկու զոհ և 30 վերաւոր ունենալով: Վառավարութիւնը կը փութայ սակայն խանախութիւններուն առջև աննեղ:

Բարչէնի դէպքը ահ ու սարսափի մէջ ձգեց թիւրք ժողովուրդը. ֆէդայիի աղբած սոսկումը չափ-սահման չունէր: Վառավարութիւնը կրկնապատկեց գիշերապահներու խումբերը, վախնալով որ Սերոբ քաղաքին վրայ կը յարձակի յանկարծ: Իսկ հայերէն անոնք, որ անտարբեր էին, այդ օրը պարծանքով ու յարգանքով բերան կառնէին ֆէդայիի ազատութեան ղինուորի անունը, որ հաւատ և յոյս կը ծաղկեցնէ սրտերու մէջ:

(Շարունակելի)

ՏՍՍՆԻՆՆԵՐՈՐԳ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

VIII

Պատմական ամենաահոնելի կատասարոֆները ունեցել են յաճախ ամենաբարերար հետևանքներ ազգերի յառաջադիմութեան տեսակետից: Այդ իրողութիւնը դիտելի է մանաւանդ Փրանս-պրուսական պատերազմից յետոյ: Փրանսիան ջախջախեալ էր. ներքին և արտաքին փոթորիկները իսպառ քամել էին նրա կենսական հիւթերը: Թուում էր, թէ նա յաղթահարուած էր ընդմիջտ. թուում էր, թէ երբէք կամ երկար ժամանակ չպիտի կարողանար նա վերականգնել իր նախկին հմայքը և պատուել հինգ միլիարդի ծանր, ճնշող բեռից, որ թշնամու անգթութիւնը հարկադրել էր նրան:

Իրականութիւնը, սակայն, այլ բան ցոյց տուց: Ճգնաժամը շուտ անցաւ: Անտարակոյս, Էլզաս-Լոտարինգիայի կորուստը մնաց Փրանսիացիներին սրտում իբրև անբուժելի մի վէրք, որ վրէժ ու ըրվանշ էր աղաղակում անդադար: Բայց Փրանսիան շատ շուտ կազդուրեց բախտի անօրինակ հարածներին: Եթէ նա ունեցաւ Սեդան, ապա ունեցաւ և հանրապետութիւն, իբր հատուցում: Եթէ նա կորցրեց Ծ միլիարդ և Էլզաս-Լոտարինգիա, ապա կորցրեց ընդմիջտ և կայսերական բռնակալութեան տխուր էմբլեմը...

Այո, եղաւ մի վայրկեան, երբ յեղափոխութիւնների մշտական հայրենիքը գտնուում էր անէացման, իսպառ կորստեան անդնդի ծայրին. բայց նա հեզնեց վեհապանծօրէն ճակատագրի բռնադատող ուժը և հսկայական մի թուիչքով յայտնեց անդնդի հակառակ ծայրին: Փրանսիան հանրապետական էր այլևս. ազատութեան ոգին 1789-ի պանծալի օրերից ի վեր՝ թափառելով, խարխափելով՝ գտաւ վերջապէս ինքզինքը. 100 տարւայ անլուր փորձութիւններից յետոյ՝ հանրապետական հրէայն իրագործեց վերջնականապէս: Փրանսիան նոր կեանք առաւ: Ընդհանուր ընտրողական իրաւունքի, պարլամենտական ազատ ուժի մի տակ՝ նա վերածնեց: Նրա աշխատանքը հրաշքներ գործեց, նրա առևտուրն ու արդիւնաբերութիւնը բարգաւաճեցին և ընդամենը մի երկու տարւայ ժամանակամիջոցում նա կարողացաւ թօթափել իր վզից ամօթալի բեռը, — նա վճարեց հինգ միլիարդը՝ ի մեծ զարմանս Բիսմարկի և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի: . .

Մեծ սլացքով առաջ գնաց նաև Գերմանիան: Պրուսիայի իշխան Ալիքէյմ՝ Նամայն Գերմանիայի կայսր հռչակեց և գերմանական մանր իշխանութիւնները ձուլեցին այդպիսով ի մի սահմանադրական պետութիւն՝ պրուսական հովանիի տակ:

Մի ու թիւնը չուկէտ եղաւ երկրի անսովոր բարգաւաճման: Ապրիտալից մի զարգացման պրօցէսը աւելի սրարշաւ առաջ գնաց այստեղ, և կարճ ժամանակում այստեղ ևս կատարեց հասարակութեան յստակ բաժանումը դասակարգերի՝ որին հետևեց ճակատագրական կերպով սօցիալական շարժման ահեղ ծաւալումը: Ապգ-

մակերպեց և արագաբայլ աճեց Սօցիալ-Դեմօկրատիան, որը ճիւղաւորելով ամբողջ գերմանական աշխարհում՝ դարձաւ հետզհետէ ահարկու մի ուժ և մի ճշմարիտ խարազան բիսմարկեան կառավարչական սիստէմի համար:

Դեռ պատերազմի միջոցին էր, որ միջազգային այդ կուսակցութիւնը իր ձայնը բարձրացրեց յանուն ազգերի համերաշխութեան, եղբայրաբար իր ձեռքը մեկնեց յաղթուած Փրանսիայի յաղթուած պրօլետարիատին և յանձին Բէթէլի ու Լիբիսեխտի՝ մոլեգին բողոքեց պատգամաւորական ժողովում Էլզաս-Լոտարինգիայի միացման դէմ, յայտարարելով այն՝ բունի, անամօթ յալիշախութիւն: Խիղախութիւնը չարաչար պատժեց. սօցիալիստական երկու աւագագոյն պատգամաւորները բանտ նետուեցին երկու տարի ժամանակով: Նրանց ձայնը՝ մարեց շօվի-նիզմի կատաղի յորձանքի մէջ. բայց սօցիալ-դէմօկրատիան այն օրից անխնայ առաջ տարաւ իր պատմական առաքելութիւնը՝ այգերի համերաշխութիւն քարոզելով և բանւորական մասսաները կազմակերպելով: Քսան տարւայ բիսմարկեան բռնակալութիւնը և 12 տարւայ (1878-1890) դաքսուիկ օրէնքների՝ սարսափները անզօր եղան կասեցնելու սօցիալական շարժումը և նրա քաղաքական արտայայտիչ՝ սօցիալ-դէմօկրատիայի աճումը: Հզօր ու միացեալ Գերմանիայի մէջ նա դարձաւ նոյնքան հզօր ու միացեալ մի կազմակերպութիւն, որ այսօր համարում է սօցիալիստական ամենամեծ բանակը ամբողջ աշխարհում և ամենուժեղ քաղաքական կուսակցութիւններից մէկը իր հայրենիքում:

Այո, և այդ բոլորը շնորհիւ հայրենիքի միութեան. . . Այդ է պատճառը, որ բիսմարկեանների հետ միասին — թէև միանգամայն տարբեր նկատումներով — Միութեան յաղթանակը ողջունում են ամէն տարի նաև Գերմանիայի սօցիալիստները:

Երաւ է, սակայն, որ պատերազմի այդ դրական հետևանքների հետ երևան եկան շուտով նրա բացասական հետևանքները ևս: Մեծ բարիքների հետ և մեծ չարիքներ. — անխուսափելի, ճակատագրական զուգընթացութիւն. . .

1870-71 թւի ճգնաժամը ծնեց այն ամեհի, հազարապիլեան վեշապին, որ այսօր հպարտ գլուխ է բարձրացնում ամէն տեղ և ուզում է խեղդել իր ճիրաններում ժամանակակից սօցիալական օրգանիզմը: Նրա անունը մի է ի տարիք՝ էր Պատերազմի արիւնոտ դաշտում իր միութիւնը կուելով՝ Գերմանիան դարձաւ գրեթէ յանկարծակի զինւորական ամենահզօր պետութիւնը, որ Եւրօպայի սրտում նստած՝ ահ էր ներշնչում հարևաններին: Բիսմարկի իղձն իրագործեալ էր, Գերմանիան, արդարև, առաջին պետութիւնն էր Եւրօպայում: Այդ հանգամանքն արդէն տակնուվրայ էր անում միջազգային քաղաքական յարաբերութիւնները, խախտում էր Եւրօպական հաւասարակշռութիւնը: Պէտք էր ապահովել նոր ու անակնկալ ընդհարումների պերսպեկտիվը. . . Եւ ահա Փրանսիայի հետ ամբողջ Եւրօպան սկսեց անընդհատ զինելը սկսեց յեղաշօջել զինւորական ամբողջ սիստէմը նորագոյն պահանջների համաձայն:

Ոչ պակաս անհանգիստ էր ինքը՝ գուուզ յաղթողը: 1888 թ. փետրւարի 6-ին ռախիստագի մէջ արտասանած

իր հուշակաւոր ձառուձ կերպով կանցելը յայտարարուած էր, որ Գերմանիան ենթակայ է միանալ յարձակման իր արևմտեան ու արևելեան սահմաններին, և թախանձագին յորդոր էր կարգուձ Գերմանիայի ներկայացուցիչներին՝ բււարկել իր պահանջած պնւորական ծախքերը: ՝Այն ուժերը, որ մենք պահանջուձ ենք — ասուձ էր Բիսմարկ — դատապարտուձ են մեզ խաղաղ քաղաքականութեան. . . Ես խորհուրդ կըտայի օտարներին, ևս հրաժարել սպառնալիքների սիստեմին. մենք գերմանացիներս վախենուձ ենք միմիայն Աստուծոց և ոչ մի ուրիշ բանից աշխարհիս երեսին. . . ՝Սպաւազէն խաղաղութիւն՝ — ահա մեր ժամանակին նշանաբանը: Տենդային եռանդով զինուձ են բոլոր պետութիւնները և միաժամանակ բոլորն էլ հանդիսաւոր կերպով ծանուցանուձ են, թէ դա ՝յանուձ խաղաղութեան՝ է. . .

Միւսին խաղաղութեան կամ ապահովութեան ստիպողական պահանջն էր, որ մղեց պետութիւններին դէպի զինակցութիւնն էր: Բիսմարկի հնարագիտութեան շնորհիւ 1879-ին Գերմանիան դաշն կապեց թիւ առաջ ջախջախած իր յիսերիմ թշամուձ Աւստրիայի հետ, և չորս տարուց յետոյ այդ դաշնակցութեան յարեց Իտալիան: Առաջ եկաւ այդպիսով հուշակաւոր երեք պետեան դաշնակցութիւնը: Գաշնակից էր փնտրուձ և Քրանսիան: Գերմանիայի կրկնակի յարձակման հաւանականութիւնը մղեց նրան հետզհետէ Ռուսաստանի գիրկը, որը նոյնպէս կարօտ էր զինակցի, բայց մանաւանդ դրամի. . . Ահա և երկպետեան դաշնակցութիւնը:

Հետեւեձք այժմ պետութիւնների քաղաքականութեան 1870-ից սկսած: Միջազգային յարաբերութիւնները բարդացան, կնձուտուցեցին, քաղաքական հորիզոնը էլ աւելի մուայլեց: Այժմ երեք մեծ խնդիրներ յայտնուցին ասպարէզի վրայ, որոնք օտն փւին միջազգային քաղաքականութեան: Դրանք են՝ էլզաս-Լոտարինգիայի խնդիր, սօցիալական կամ բանւորական շարժում և արևելեան խնդիր: Վերջինս, իհարկէ, առաջինն է հանդիսանուձ թէ ժամանակագրական կարգով և թէ իր սուր բնաւորութեամբ:

Յեղափոխական խմորուձը դադար չէր առնուձ Բալկանեան թերակղզուձ: Այնտեղ դեռ կային քրիստոնեայ ազգութիւններ, որոնք հեծուձ էին տաճկական խարազանի տակ: 1875-ին ապստամբեցին սերբաբնակ Բոսնիա ու Հերցեգովինա: Ահա այն կարուկ, ազգու մանիֆեստը, որով ապստամբները դիմուձ էին աշխարհին. ՝նա, ով անձնական փորձով չի ձանաչուձ թիւրք բռնակալութիւնը, նա, ով ախանաես չի եղել քրիստոնեայ ազգաբնակչութեան տառապանքներին, չի կարող նոյնիսկ մօտաւոր կերպով պատկերացնել իրեն, թէ ինչ է որայեան՝, այդ անլեզու էակը, անասունից էլ ստոր, որ ծնւած է յաւիտենական գերութեան համար: Մեր հողն ամէն մի կտորը ողողած է մեր նախնիքների արիւնով ու արցունքներով: Այսօր այդ որայեան՝ վձուձ է կուել իր ազատութեան համար կամ թէ մեռնել մինչև վերջին մարդը. . .

Ապստամբները յայտարարեցին Բոսնիա-Հերցեգովինայի միացուձը Մերբիայի հետ: Ըարժուձը աղող էր պնուձ, թիւրքաց զօրքի թիւրք երկու աղաւաղն նրկել:

ների մէջ հազիւ հասնուձ էր 2,000-ի: Պետութիւնները՝ երկիւղ կրելով Բալկանեան շնդհանուր հրդեհից՝ փութացին միջամտել: Աւստրիան, որ առանձնապէս շահագրգուած էր, միջնորդ հանդիսացաւ թիւրք կառավարութեան և ապստամբների միջև, որոնք այսպէս ձեակերպեցին իրենց պահանջները. 1) լիակատար կրօնական ազատութիւն քրիստոնեաների համար, որոնք պիտի ունենան մահձգականների հետ հաւասար իրաւունք վկայութիւն տալու արդարադատութեան առաջ. 2) տեղական ժանդարմերի կազմակերպութիւն. 3) հարկերի սահմանուձն բաւ էութեան ու քանակութեան և հարկահանների կամայականութեան վերացուձ:

Պահանջները ներկայացրին սուլթանին և ընդունեցին. . . այնպէս, ինչպէս 61-րդ յօդուածը և մայիսեան ծրագրը Հայաստանի վերաբերմամբ: Սուլթանը սկըզբունքով ընդունեց, բայց մի քայլ անգամ չարաւ դէպի իրագործուձը: Իսկ ապստամբները պահանջուձ էին կննդանի ապացոյց. նրանք պահանջուձ էին տաճկական զօրքի հեռացելը և պետութիւնների երաշխաւորութիւնը՝ ռէֆօրմների իրագործման համար: Եւրօպան խուլ ականջ արաւ ու յամաւեց իր թուլամորթ քաղաքականութեան մէջ: Բայց ահա շուտով վրայ հասան անցքեր, որոնք աւելի ուժգին ցնցեցին հասարակական կարծիքը Եւրօպայում և ստիպեցին պետութիւններին տարբեր դիրք բռնել սուլթանի նկատմամբ: Մայիսի 7-ին 1876 թ. Մարմիկում օրը ցերեկով Քրանսիական և գերմանական հիւպատոսները խողխողեցին մահձգական խուժանի ձեռքով: Դրա հետ միաժամանակ սկուեցին շարգերը Բուլղարիայում:

Ենթարկւած միւսին մարդախոշոշ ռէժիմին և հարւան ազգերի ազատագրական փորձերով քաջալերւած՝ բուլղարները ևս շարժուցին վերջապէս և բռնութեան դէմ բռնութիւն քարոզեցին: 2հրէզների խժգժութիւնները 1875-ին առաջ բերին թոյլ ապստամբութիւն Մտրիւցայում. 10,000 բաշխօզուկներ եկան Երւզըզի հրամանով խեղդելու նորաբողոք շարժումը: Միմիայն Բատակ կոչւած փոքրիկ քաղաքում 7,000 ազգաբնակչութիւնից 6,000-ը մորթուցին բարբարոսութեան ահուելի նրբութիւններով: 79 շէն գիւղեր մի քանի օրայ մէջ հրդեհի մատնեցին. 15,000-ից աւելի կոտորուցին և 80,000 հոգի մնացին անապաստան: Ամբողջ գաւառը դարձաւ գերեզմանոց:

Անցքերը գահալիժում էին իրար վրայից: Եւրօպան ալեկոձուձ էր, Երկու հիւպատոսների սպանութիւնը աւելի էր բորբոքուձ թիւրքատեաց շարժումը, քան յբուլղարական սարսափները. . . Պէսը էր շուտընդփոխ միջամտել: Յարը գնաց Բերլին, երեք դիւանատների ներկայացուցիչները խորհեցին ու մշակեցին Բերլինի նշանաւոր մէմօրանդումը, որը պահանջուձ էր բուլղար ապստամբներից երկու ամուայ զինադադար, այդ ժամանակամիջոցում պիտի ձեւնարկէին սուլթանի կողմից ազգու միջոցներ նրանց պահանջներին գոհացուձ տալու համար: Հակառակ դէպքում ամբողջ Եւրօպան միաբանելով՝ պիտի բռնութեամբ իր կամքը թեղարդէր թիւրք կառավարութեան: Մէմօրանդումը խմբագրուց Ռուսիայի կողմից և ընդունեց Քրանսիայից ու Իտալիայից: Անգլիան հրաժարեց, Լօրդ Բիօնսֆիլդ մինչև ուղղուձուձը տողորւած հակառուսական տենդենցիաներով՝ ոչ թէ միջ չէր կնուցուձ արգելելու Ռուսաստանի դէմ:

տանի խիզախ ծրագիրները իրագործուով և յանուն այդ նպատակի նա նորինսկ մոլեռանդ պաշտպան հանդիսացաւ «Թիւրքիոյ ամբողջութեան» ու մի առժամանակ ոճրագործօրէն քաջալերեց բօսնեակների և բուլղարների դաճապետին:

Միևնոյն գիշերը (29-30 մայիս 1876), երբ մեծուրանդուով պիտի ներկայացուէր թիւրք կառավարութեան, սուլթան Աբդուլ-Ազիզ անսպասելի կերպով գահընկէց եղաւ և երկու օր յետոյ խողխողեց: Թագաժառանգը Մուրադ V սուկ գործիք էր «Երիտասարդ թիւրք» կոչուած կուսակցութեան ձեռքում, որի ամենականաւոր ներկայացուցիչն էր Միթհատ փաշա, իբր թէ ազատամիտ, բայց իրօք Փանատիկոս մի թիւրք, վառուած ատելութեամբ դէպի Եւրոպան և եւրոպական քաղաքակրթութիւնը: «Նոր ուժով» վճռեց վերջ դնել ազատագրական շարժումներին ու պետութիւնների միջամտութիւններին: Սերբիայի և Մօսկոնեգրոյի անընդհատ պինաւորման դիմաց՝ Մուրադ V-ի կառավարութիւնը անմիջապէս բացատրութիւն պահանջեց և հետեւեալ պատասխանն առաւ սերբիական իշխանից. «Թիւրքաց զօրքը և բոլոր վայրենի հօրդաները պէտք է հեռանան մեր սահմաններից, և Սերբիայի ու Մօսկոնեգրոյի զօրքերը պիտի խաղաղացնեն Բօսնիան ու Հերցեգովինան»: Թիւրքիան մերժեց, և երկու դաշնակից բալկանեան պետութիւնները պատերազմ յայտնեցին նրան. յուլիսի 1-ին զօրքերը անցան սահմանը... Միևնոյն ժամանակ սկսեց կամաւորների հոսանքը Ռուսաստանից դէպի Բալկանները. ռուս օֆիցերներ և զինեւրաշներ ցարի հրահանգով գնում էին կուլեւու սլավօնականութեան պիղծ թշնամիների դէմ:...

Արևմուտքում նոյնպէս աճում էր թիւրքատեաց շարժումը: Բիկօնսֆիլիքն անգամ ստիպուած եղաւ դիջանել իր սեփական երկրի հանրային կարծիքի առաջ, որը անսովոր զրգուման էր հասել Գլադստօնի մերկացումներից յետոյ՝ «բուլղարական սարսափների» առթիւ: Անգլիական կառավարութիւնը համաձայնութեան եկաւ միւս պետութիւնների հետ՝ պահանջելու Տաճկաստանից նախ զինադադար, ապա և խաղաղացման մի ծրագիր, որով պիտի հաստատուէր վարչական անկախութիւն Բօսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի մէջ:

Այդ միջոցներում առաջ եկաւ կրկին ուժեղ մի փոփոխութիւն Տաճկաստանում: Մուրադ մի քանի ամիս թագաւորելուց յետոյ նոյնպէս տապալեց և Երէզրդի մահահատ պարանքներում նկարեց Համիդի չարաշուք սուլթանը... Պատերազմը շարունակուում էր. սև-լեւնցիք ու սերբերը ռուսաստանցի կամաւորների հետ հարուածում էին տաճկին, բայց վերջինս հետզհետէ սաստկացնում էր իր թափերը: Սերբիայի զօրքը ջախջախեց և Բելգրադի ճանապարհը բաց մնաց. սարսափահար, յուսահատ՝ քրիստոնեաների բանակը աչքը յառեց դէպի հիւսիս և օգնութիւն աղաղակեց: Պետերբուրգից լուեց արձագանքը: Ռուսաստանը անջատեց եւրոպական կօնցերտից և որոշեց միայնակ հաշիւ տեսնել տաճկի հետ: Աւստրիայի չէզօքութիւնը շահելու համար նա մտաւ բանակցութեան նրա հետ և երկու պետութիւնները կապեցին գաղտնի դաշինք, որով՝ Աւստրիան պիտի գրաւէր յետագայում Բօսնիան ու Հերցեգովինան:

Պատերազմական գործողութիւնները սկսեցին միա-

ժամանակ Եւրոպայում և Ասիայում: Ասիական բանակի հրամանատար Լօրիս-Մելիքով կարճ միջոցում գրաւեց հայկական քաղաքները՝ Արդահան ու Ղարս և դիմեց դէպի Երզրում: Թիւրքերը ջարդ կրեցին նաև Բալկանների վրայ: Ռուսաց զօրքը՝ յաղթական ու սպառնալից՝ սլանում էր դէպի Պօլիս... Այն ժամանակ ահաբեկուած սուլթանը շտապեց համակերպիլ Ռուսաստանի պահանջներին: Մարտի 3-ին 1878 թ. ստորագրեց Սան-Ստեֆանօյի դաշնագիրը: Նա շնորհեց լիակատար անկախութիւն Սերբիային, Մօսկոնեգրոյին և Ռուսիային: Բուլղարիան յայտարարեց ի ն ք ն ա վ ա ը ի շ խ ա ն ու թ իւ ն: «Դաշնագրի համաձայն» Բօսնիան և Հերցեգովինան պիտի ստանային վարչական անկախութիւն և հայկական նահանգներում պիտի մտցնուէին ուժեղօրմներ:

Ռուսաց զօրքի փայլուն յաղթութիւնները յարուցին Եւրոպայում մի կատարեալ փոթորիկ: Անգլիան և Աւստրիան բողոքեցին Սան-Ստեֆանօյի դաշնագրի դէմ: Արևմտեան պետութիւնները փոխադարձ համաձայնութեամբ որոշեցին գումարել մի համաժողով, ուր պիտի քննուէին ու գոհացուցիչ լուծում ստանային համաեւրոպական բնոյթ ունեցող բոլոր խնդիրները: Անգլիան առաջապահ էր հակառուսական այդ պրօպագանդի: Պէտք էր փակել Ռուսիայի առաջ բրիտանական Հնդկաստանի ճանապարհը, և ահա յունիսի 4-ին 1878 թ. Անգլիան գաղտնի դաշն կապեց սուլթանի հետ, որով պարտաւորեց պաշտպանել ասիական Թիւրքիան Ռուսաստանի յարձակումներից, և իբր հատուցում՝ այդ ապագայ ծառայութիւնների՝ նա գրաւեց Վիպրոսը:

Այդ դէպքից մի քանի օր յետոյ, յունիսի 13-ին, բացեց Բերլինի հռչակաւոր կօնգրէսը Բիսմարկի նախագահութեամբ: Անգլիայի ու Աւստրիայի աղդեցութիւնը գերակշռող էր այդտեղ, և նրանք երկուսն ամենից աւել շահեցին: Մինը գրաւեց վերջնականապէս Վիպրոս կղզին, միւսը՝ Բօսնիա և Հերցեգովինա: Նոյն այդ երկուսի ջանքերով էր, որ հիմնապէս փոփոխեց Սան-Ստեֆանօյի դաշնագիրը և ջնջեցին նրա ամենահամակրելի կէտերը՝ քրիստոնեայ ազգութիւնների վերաբերեալ: Այդ դաշնագրով ազատ հռչակուած Մեծ Բուլղարիան, որ ամփոփում էր իր մէջ բացի բուն Բուլղարիայից նաև Արևելեան Ռուսիան և Մակեդոնիայի մեծագոյն մասը, բաժանեց երեք մասերի. Արևելեան Ռուսիան և Մակեդոնիան անջատեցին Մայր-Բուլղարիայից. առաջինը դարձաւ ինքնավար նահանգ քրիստոնեայ կառավարութեամբ, երկրորդը նորից վերագործրեց իր դաճին... Հայաստանի ու Մակեդոնիայի վերաբերմամբ մեղրուին դաշնագրի մէջ 61-րդ և 23-րդ յօդուածները, որոնք պիտի մնային մեռած տառ:

Այո, արևելեան քրիստոնեաների դատը զոճ գնաց հաւաքական Եւրոպայի և մանաւանդ Անգլիայի տմարդի քաղաքականութեան: «Թիւրքիոյ ամբողջութիւնը» պահպանելով — թէկուզ հենց ցարիզմի արշաւանքի դէմ — նրանք գործեցին մի հսկայական ոճիր ընդդէմ մարդկայնութեան: Հայ-կրեւտական-մակեդոնական հարցերը առկան մնացին. արևելեան ողբերգութիւնը յարատեց, նւիրելով 19-րդ դարու պատմութեանը մարդկային անլուր չարչարանքների սրտաձմիկ, աղիխարշ էջեր...

(Շարունակելի)

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«Պ Ր Օ Ա Ր Մ Է Ն Ի Ա»

(№. №. 13, 14, 15, 16)

Այս համարներում գետեղած են բաղձաթիւ թըղթակցութիւններ Տաճկահայաստանից և յօգւածներ իմիջե ալլոց՝ Անատոլ Ֆրանսի, Բիառի, Կօնտանսօնի և Իօրիսի: Ահա Ա ն ա տ օ Լ Ֆ Ր ա ն ս ի մի յօգւածը ամբողջութեամբ.

«ՀԱՅԵՐԻ ՄԻՌՈՒԹԻՒՆ».— «Բոլոր նրանք, որոնք ինձ պէս հիւրասիրել են հայ գաղութներից Եզեպոսում ու Ֆրանսիայում, պահում են իրենց սրտի մէջ խոր հիացում և ջերմ համակրանք դէպի այդ հայրենազուրկ, աշխոյժ ժողովուրդը, որ ենթակայ է բնաջնջման: Բոլոր հայերը, ինչ կենցաղ էլ ունենան նրանք օտարութեան մէջ, անձկութեամբ են դիտում մահաւան սպառնալիքների տակ գտնուող իրենց եղբայրակիցների վիճակը: Նրանք գիտեն, որ սուլթանը մեթօդիկ կերպով իկատար է ածում քաղաքական մի ծրագիր, որի նպատակն է ոչնչացնել բովանդակ հայ ցեղը, և նրանք ընդունակ են մեծ ջանքերի ու զոհողութիւնների, որպէսզի կարողանան փրկել այն, ինչ որ հնարաւոր է դեռ փրկել:

«Սուլթանի ծրագիրներն խանդարելու ամենալաւ միջոցն է՝ հրատարակել ի գիտութիւն աշխարհի՝ կոտորածի ամեն մի փորձ, հէնց որ երևան են գալիս նրա առաջին նշանները: Այդ բանում մենք կարող ենք օգնել հայերին: Մենք կարող ենք ձայն բարձրացնել բազմաթիւ լրագիրների շահագրգռած լուսթեան մէջ: Կոտորածները անկարելի կը դառնան, հէնց որ յայտնեն աշխարհին: Կառավարութիւնները թողնեն, որ կոտորեն. «Մենք տեղեկութիւն չունենինք», ասում էին նրանք: Պէտք է, որ սրանից յետոյ կառավարութիւնները իմանան և յայտնի լինի, որ նրանք գիտեն:

«Մի բան, որ ամբողջ աշխարհի հայ գաղթականութիւններին հարկաւոր է— դա միութիւնն է: Բաւական չէ, որ նրանք արթուն լինեն: Պէտք է, որ նրանց արթնութիւնը միասին գործադրի:

«Նրանք պէտք է մի միտք և մի հոգի միայն ունենան: Նրանք պէտք է իրար հետ միասին լինեն սպառնալիքների ենթակայ եղբայրների պաշտպանութեան համար: Այս պայմանով միայն նրանց գործունէութիւնը իրական կը ընի, որովհետեւ համաշխարհային կը լինի: Նրանց դատը համամարդկային դատ է. պէտք է, որ նրանք շահագրգռեն ամբողջ մարդկութիւնը:

«Եւրօպայի և աշխարհի ուշագրութիւնը գրաւելու համար պէտք է, որ բոլոր հայերի ձայները միանան մէկ ձայնի մէջ: Նրանց փրկութեան միակ պայմանը միաբան գործունէութիւնն է»:

ԱՆՍՏՈԼ ՖՐԱՆՍ

«ՈՆՏԱՆՍՕՆ» «Քրիստոնէաներ և Մահմեդականներ» գրքի հեղինակը գրում է «Պրօ Արմէնիայի» խմբագրութեան.

«... Այն դատը, որի համար մարտնչում եք դուք, վաղուց գրաւել է իմ համակրանքը... Հայերը մի ազգ են, որի ահագին մեծամասնութիւնը կազմում են երկրագործները... Լեռների կատարներին թառած

իրենց գիւղերի շուրջը՝ նրանք անցնում են իրենց ժամանակը, արօրն ու բրիչը շարժելով և իրենց հօտերն արածեցնելով: Ինչպէս բոլոր լեռնաբնակ խաշնարած կամ հողագործ ժողովուրդները, հայերը ևս ունեն վնասուհան արժանաւորութիւններ, որոնք հնարաւորութիւն են տալիս մէկ ազգի՝ պաշտպանել իր անկախութիւնը:

«Հարկաւոր է շեշտել այս կէտի վրայ ոչ թէ միայն այն պատճառով, որ նա երևան է հանում մի կարևոր ճշմարտութիւն, այլ որովհետեւ նա պիտի ոչնչացնէ հայ «սարկաֆի» մասին տարածած առասպելը: Դա չի խանգարում սակայն պնդել, որ հայ ցեղը ունի հրաշալի ունակութիւններ առևտրի ու գործառնութիւնների մէջ, երբ դէպքը ներկայանում է. բայց այդ յատկութիւնները նա բաժանում է աշխարհիս ուրիշ մեծ ազգութիւնների հետ»:

«Արգիւլ Համիդի ներքին կեանքը» գրքի հեղինակ Ֆ. Գ օ Ր Ի ս ը՝ օրինակ վերցնելով տաճկական «Սէրվէթ» լրագիրը և նկարագրելով նրա խմբագիր Թահիր-բէյի վերին աստիճանի կեղտոտ անցեալը ու ներկայ սրիկայական սխրագործութիւնները, բնորոշում է թէ որքան ընկած է տաճկական մամուլը:

«Սուլթան Համիդի թագաւորութեան ամենաբնորոշ ախտանշաններից մէկն է անշուշտ աւազակների և եղիւնագործների այն մեծ բազմազանութիւնը, որն առաջ եկաւ նրա ռէժիմի տակ.— օրինազանց նախարարներ, մարդասպան կառավարիչներ, կոտորող վնասործներ, պաշտօնական և անպաշտօն լրտեսներ, գող-աւազակների մի ամբողջ աշխարհ, որոնցով սուլթանը շրջապատուած է իր քանդուկ գործը յաջողեցնելու համար:

«Ելլիզբէ և նրանից կախում ունեցող դադանանոցների ընտանի գազանների մէջ պէտք աւանձին տեղ տալ մի տեսակ լրտես օրագրողներին և շանտաժիսաններին, որոնք Թիւրքիայի խոցերից մէկն են»:

Պ Ի Է Ո Ք Ի Խ Ո. «Ոչ միայն Բիթլիսի ու Երզրու մի սահմաններում, այլև ամեն տեղ, մասնաւորապէս Մուշի և Բայազէթի շրջակայքում, վերսկսւել են սիստէմատիկ սպանութիւնները...»

«Իրենց քրիստոնէայ և քաղաքակիրթ անւանող եւրօպայի ներկայացուցիչները համբերում ու քաջալերում են արքայ մարդասպանին. նրանց անմիջական պարտականութիւնն է՝ դունչը կապել ու խողխողել կարմիր Գազանին: Եթէ նրանք յապաղեն, վախենալու է, որ մասնաւոր նախաձեռնութիւնը փոխարինէ նրանց գիտաւորեալ անկարողութեանը. բայց այն ժամանակ թերևս վնասւեն եւրօպական շահերը և դո՛ւս են եւրօպացիների կեանքեր՝ եթէ վճուրի հարածեւլ այդքան ոճիրների հեղինակին»:

* * *

Մեր ընկերները Բերլինից մեզ հաղորդում են հետևեալ ուրախալի փաստը.

«Յունիսի 15-ին և յուլիսի 11-ին տեղի ունեցած ուսու սուսնողների երկու ժողովում, որոնց ներկայ էին 40-50 հոգի, երկու հայեր համառօտ զեկուցումներ կարգացին հայոց հարցի մասին, նպատակ ունենալով ծանօթացնել ուսու ընկերներին թիւրքահայերի քաղաքական վիճակի և մեր շարժման գլխաւոր մօմենտների հետ:

Ժողովականներին բաժանեցին «Գրոշակի» տասնամեակի համարները և զանազան քաղաքներ «Գրոշակից» ու «Պրօ Արմենիայից» ուսուներէն լեզուով ժողովականների առաջարկութեամբ՝ նոյնիսկ մի փոքրիկ հանգանակութիւն եղաւ յօգուտ «Դաշնակցութեան» տեղական կոմիտէի: Առաջին ժողովում առաջարկեց հետեւեալ բանաձեւը.

«Քերլինի ուսու ուսանողների ժողովը՝ կայացած 1901 թ.ի յունիսի 15-ին, լսելով հայկական շարժման վերաբերեալ մի զեկուցում, յայտնում է իր ջերմ համակրութիւնները մարտնչող հայ եղբայրներին եւ յոյս որ նրանց հերոսական կռիւր հայ ժողովրդի քաղաքական եւ սոցիալական ազատութեան համար՝ կը պսակւի կառարեալ եւ շտապ յաջողութեամբ»:

«Այդ բանաձեւը ընդունեց բուն ծափահարութիւններով»:

Ռուս երիտասարդների այս համակրանքը, որ սիրով արձանագրում ենք, անկասկած շատ թանկ է մեզ համար:

Թ Ե Ր Թ Օ Ն

Դ Ա Ր Բ Ն Ի Ե Ր Գ Ը

«Արհ՛ անո՛ւմ ես քո խոփը, տանք դարբնին կանու, կանոն-կոսիներ սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կանուր: Սորմայ հայեր, առէ՛ք խոփը, առէ՛ք դարբնին կանու, կանոն-կոսիներ սուր ու սուսեր՝ չպատասանք փրկելու»:

ԳԱՄԱՌ-ԶԱՄՈՂՊԱ

I

— Գե՛հ, ելէ՛ք, որդիք: Ասողը լուսաբեր
 Ազուց է սահում խաւար երկէքում,
 Նրա կաթնածիր, պլալան շողեր
 Ազուց մայր լուսոյ ուղին են հարթում:
 Խաւարն է դուրում, ջուռնը սարսում,
 Ասա արշալոյսի դու՛նաս կարապետ՝
 Սիրուն ասողիկը լոյսն է աւետում,
 Զարն իր սարսափով կորչում է անհետ:
 Գե՛հ, ելէ՛ք, որդիք, հա՛մ արեւելքի
 Մասը հորեմաշ քօզը պատառեց,
 Լուսոյ քնքուղից անհուն երկնքի
 Խաւար կամարը մեզմի գունատեցի:
 Աղօթարանից հոգն գրկաբաց
 Աղջոյն է բերում՝ մնլած դաշտերին,
 Եւ ծաղիկները՝ խաւարից յոգնած՝
 Նայում են լուսոյ անդրանիկ չաղին:
 Նրանց թերթիկներ իրար ականջում
 Մեղմ՝ փսփում են երգը վազորդեան
 Եւ եթերային զեփիւսի գրկում՝
 Այսելում սիրոյ օրօք հնչաւթեան:
 Գե՛հ, ելէ՛ք, որդիք: Հովնն էլ հնէկ
 Լացող սրնպի երգը սրբուն,
 Այրում մահալած հասն էլ շարժւեք,
 Կիմում է դեպի դաշտերը սիրուն:
 Երեկ երեկոյ, ուշ վերջալուսին,
 Մեր միահատու մուրճերի ձայնով
 Հրատեչաւ ախնք ծածկուղ արեւին:
 Ելէ՛ք, սղջուններ նրան սղջն ձեռով
 Անբոյ, բնայ վառար, գե՛հ վեր կաց շուտով:
 Եւ զայն անուշ եւ սղջն կեռն են նայում:

Այդպէս է ամէն ինչ ընթանում կարգով — Մեծերի յետեւից փոքրերն են քայլում:
 Նայիր ասողերի սիրուն խմբերին,
 Որը բոցավառ է՝ իր յետեւում
 Քաշում է մի շարք ուրիշ փոքրերին,
 Ամէնքը միասին գնում են գնում...
 Արաբջութիւնն իր իմաստութիւնով
 Չափ է սահմանել մեծին ու փոքրին,
 Յաւատենական իր օրէնքներով
 Պարտք ու իրաւունք բաշխել ամէնքին:
 Հսկայի ուժին համահաւասար
 Նրա կրծքի տակ մի սիրտ է դրել,
 Եւ այդ վեհ սրտին վայել ու յարմար
 Նրան Սուրբ Գործի ասպարէզ տւել:
 Չափը վերից է, լոկ գործն է վարում,
 Ով որ շատ ունի, նա շատ է տալի,
 Ներդաշնակութիւնն անխախտ է մնում,
 Եւ կեանքը դառնում է քաղցր, բերկրալի:

Չեր մեծ եղբայրն արդէն վերկացաւ,
 Պետօ, Գուրգէնիկ, Վազգէն ու Բաբկէն,
 Դե՛հ, դուք էլ ելէ՛ք, հաւը խօսեցաւ,
 Մար ու ձոր թնդաց թռչնոց ձայներէն:
 Մեղմ ղողանջում է ձայնը կոչնակի
 Կիսաբուն դժբախտ աշխարհի համար,
 Ինչպէս գթառատ, վշտացած ոգի,
 Որ սուգ է ասում խեղճերին անձար:

Այն — ազատ ոգու աղօթքն է անբիծ՝
 Նման բուրմունքին ցողապատ ծաղկի,
 Որ վեր է ձգւում տառապող երկրից՝
 Բաղխելու դուռը փակած երկնքի:

Ելէ՛ք, սրբազան այդ մրմունջներին
 Խառնենք մեր աղօթք, մեր յոյս ու խնդում,
 Թող երկնքն ուժ տայ մեր բաղուկներին,
 Յաւն ու հառաչանք մեզմի աշխարհում:
 Ահա ամէնքդ էլ արդէն պատրաստ էք,
 Օրհնեալ լինիք դուք, հնազանդ որդիք...
 Դե՛հ, զմանք այժմ՝ մեր գործն սկսենք,
 Զեռք առնենք երկաթ, պողպատ ու գործիք:
 Թող արշալոյսի առաջին շողեր
 Մեր վառ հնոցի կայները տեսնեն,
 Թող որ մեր մուրճի ուժգին հարւածներ
 Արբալան-Գործի գալուստն աւետեն:

II

Աղջոյն ձեզ, սղջն, կարծրակուս մուրճեր,
 Կեանքից կուսած՝ մեռալն էք կրծում...
 Հուճկու ձեր թափի հուճկու հարւածնիք
 Բարին և շարն են ծնում աշխարհում:
 Ո՛հ, ինչու յաճախ մարդկային ձեռքում
 Գուք, անգիտակից, անարթ բանութեան,
 Արեան, արցունքի գործիք էք դառնում,
 Մեղապակից լինում անարդարութեան:
 Աարծր մեռալը ձեր հարւածներով
 Գառնում է ասկեղ գէղք բոնակալին,
 Աշխարհն է լրնում հեծեծանքներով,
 Իողողը խեղդում խեղճի շթնակներն:
 Ո՞ր շար Ատաւածը բախար մարդկային
 Յաւն ու սրտին, բայց հետ հաշտեց:

Ինչո՞ւ արօրին, փոցխին, մանգաղին
Սուրն ու նիզակը նա ընկեր տւեց. . .

Անգէտ ու անփոյժ աշխարհի բախտին,
Անհուն դարերից ծեծում էք ծեծում,
Ձեռն ու ուժ տալիս երկաթ-պողպատին,
Ազատ, անազատ կեանքեր սահմանում:

Դժբախտ ստրկի բազուկի շղթան
Դուք էք շողկապում օդակ-օդակից,
Եւ ազատ մտքի բանտերի փական
Դուք էք եռանդով կռւում պողպատից:

Էլ հէրիք, մոլորձեր. . . Ձեր հզօր թափից
Թող այսուհետև հառաչե չարիք:

Շղթան՝ թօթափած ստրկի ձեռքից,
Փշրենք ու կռենք պայքարի գործիք:

Շղթայ չենք կռի և ոչ մի ձեռքի —
Անազատ կեանքով շատ տառապեցինք.
Վապանք չենք շինի և ոչ մի մտքի —
Վաշկանգւած մտքից շատ ցաւ կրեցինք:

Խաղաղ վատասկի, սուրբ աշխատանքի
Մենք պիտք կռենք փայլուն գործիքներ,
Խաղաղ վայելքի, արգար քրտինքի
Մենք պիտի նւիրենք բոլոր մեր ջանքեր:

Բայց այնտեղ, ուր որ բռնութեան ձեռքից
Հեծում է մարդը հազար ցաւերով —

Այնտեղ լոկ սուսեր քաշենք պողպատից,
Լոկ արեան գործիք կռենք մուրձերով. . .

III

Քեզ ևս ողջո՞ն, հնոց բոցափառ,
Որ քո բարկ ծոցում քնքոյշ խնամքով
Դուստրը երկնքի՝ լուսաւոր պայծառ
Հուրը կենսատու՝ կրում ես սիրով:

Երկնքից խլած կայծն աստուածային
Անհուն խաւարի քօղը պատառեց,
Լոյս և ջերմութիւն տւեց աշխարհին
Եւ ձյմարտութեան նա ուղին հարթեց:

Ի՞նչ փոյժ՝ թէ ժայռին դամւած մարդկութիւն
Արծւի կտցով պատառւած կրծքով
Քինոս երկնքից հայցէր թողութիւն
Եւ լոյսը գեներ անլուր ասնջանգու:

Մոխրում թաղւած մի հատիկ կայծից
Հրդեհն է ծնում ահեղ բոցերով,
Եւ ձյմարտութեան մի հատիկ չողից
Բիւր սիրտ է վառւում սրբազան յոյզով:

Յոգնած դարերի մաշյլ շարքերում
Կան բոցապսակ փայլուն տարիներ,
Յոգնած մարդկութեան մաշյլ անցեալում
Կան բոցով վառւած վսեմ հոգիներ:

Նւիրական հօւր. . . Քո կիզիչ շնչով
Եւ մոխիր հաբած սեւաւոր սրտեր
Մեղմ փոթոթւում են դառն կսկիծով,
Եւ այրում միսում տանջւած հոգիներ:

Գո՛ւ ես փոթորկում ըմբոստ հոգիներ
Ոչեմ պայքարի ահեղ-ժամերին.
Գո՛ւ ես խաբանում անարդ քահանաներ
Ոչեմ դաւաճանին ու չարագործին:

Իսկ երբ խաւարը շատ է ծանրանում
Թշուառ մարդկութեան ցաւալար գլխին,
Երբ չարիքի անկ հեծող աշխարհում
Անէծք է լուսւմ անպուժ երկնքին:

Երբ որ բռնութեան բիրտ կապանքներում
Տառապանքներից խամրած շրթունքներ
Էլ չեն մրմունջով սև բախտը ողբում
Եւ գահիճների չեն լիզում ոսքեր, —

Ա՛հ, այն ժամանակ անարդ բռնութեան
Նշաւակ դարձած սարուկ բազուկներ
Յուսահատ թափով ցնցում են շղթան,
Վաշկանգւած ձեռքի փշում կապանքներ. . .

Եւ շղթաների հզօր ցնցումից
Թռչում են մեկէն կայծեր անհամար,
Ինչպէս կայծակներ ծնած ամպերից.
Դարերից իշխող պատռում են խաւար:

Եւ Ազատութեան Սրբազան Արին,
Ինչպէս փայլակը սև հորիզոնով,
Բոցէ պսակը յաղթական ճակտին՝
Անցնում է հպարտ, փրկարար թափով:

Նրա ճաճանչից փայլ են ստանում
Հազար ու հազար խաւարած աչքեր,
Նրա ջերմութեամբ յոյժ են ստանում
Հազար ու հազար թողւած սրտեր:

Վոյր զօրութեան մէջ համր տարերքի
Չարիքն ու բարին ընկեր են դարձած:
Ազատ շանթերից ամպոտ երկնքի
Աւերիչ, ինչպէս վիշապ կատաղած, —

Հնդեհն է իջնում խուլ մոմոտցով,
Տուն, բնակութիւն գերեզման շինում
Եւ մոխիրների ախուր կոյտերով
Վեանք, երջանկութիւն յախտեան թաղում:

Եւ երբ երկրի մաշյլ արգանդում
Հուրը կրծում է անդունդի պատւար —
Ինչպէս զայրոյթը մարդկային սրտում
Մի ելք է փնտրում դեպի լոյս աշխարհ —

Բոցերով յղի լեռները հսկայ,
Ասես՝ մի ահեղ երկունքով բռնւած,
Հեծում են ցաւից աշխարհի վրայ,
Խանձւած արգանդից վիժում աւերած:

Իրանց կատարի մաշյլ բացւածքից
Ծուխ ու բոց որձկում և քարեր ժայթքում,
Գիւղ ու քաղաքներ շինւած դարերից
Ահաւոր թափով աւերակ դարձնում:

Բայց և նոյն հուրը աղնիւ սրտերում
Ղեկ Ազատութեան գործն է հզօր. . .
Գե՛հ, թող մեր խաղաղ այս գործանոցում
Նա և՛ մեր ջանքը պսակի այսօր:

IV

Նայեցէք, որդիք, այս ծիր դնդանին:
Հինաւորաց ժանգը պատել է նրան,
Ինչպէս ամօթը սարկի քակտին,
Ինչպէս մութ անպը կատարին լեռան:

Խեղձ հայրենիքի դժբախտ օրերում
Սա՛ է ծառայել գործիք չարութեան,
Արեան, սրբունքի սև տարիներում,
Այստեղ են ծեծել զէնքեր բռնութեան:

Մեր խեղձ պապերը քանի՞ տարիներ
Իրանց ձեռներին կռել են շղթայ,
Եւ նրանց աչքից քամւած արցունքներ
Սև ժանդ են կարել դնդանի վրայ:

Նոր է մեր կեանքը, նոր ձուլենք զնրան. . .
Ձուլենք մենք նրան ողջ կուս պողպատից:

Հաստաբեատ, փայլուն, ամուր, անասան,
Թող որ չտնայ նա մեր հարւածից:
Մեր նոր զնգանը ձուլելու համար
Ահա բերում եմ զուտ, կարծր պողպատ:
Շուրջ բոլորեցէք. էլ չ'առնենք դադար.
Զարկեցէք թափով, հուժկու, անվհատ:
Սերոր, դու այստեղ կանգնիր, կենտրոնում,—
Ամէնից ծանր մուրճը քեզ բաժին.
Եւ միաներդ — երկու կողմերում,
Ամէնքիդ ուշքը դարձած զնգանին:
Զարկեցէք, որդիք... Ղառման հնոցում
Պողպատի շերտերն իսպառ փափկել են:
Տեսէք հա, ամէնքն իրար են ձուլում.
Զուր չէ որ երկաթը տաք-տաք կը ծեծեն:
Զարկեցէք, որդիք... Թող հիմքն ամրանայ,
Թանձր կոճղի մէջ նա է տեղ բռնում:
Ամուր հիմքով շէնքն ամուր կը մնայ,
Ինչ որ հիմք չունի, շատ վալ է ընկնում.
Ժպտում է ժայռը հզոր մրրկին,
Երբ որ իր հիմքը անդունդն է մուսած.
Քաճի, փոթորիկ հեղնում է կաղնին,
Երբ հաստ արմատը խորունկ է թաղած:
Զարկեցէք, որդիք, զարկեցէք հիմքին.
Թանձր կոճղի մէջ նա պիտի մնայ:
Թէ մեր հայրերն էլ հիմքով գործէին,
Այսքան սև օրեր չէինք ունենայ:
Հիմքը պատրաստ է, յետ տանկը հնոց.
Թող որ նա այնտեղ շիկանայ նորից:
Իսկ դուք բերէք ինձ ունեղիք, կոոց,
Մի նոր շերտ կտրենք կարծր պողպատից:
Փռենք պողպատը զնգանի վրայ,
Թող որ երեսը հաստաբեատ լինի.
Հնոցում պահենք հարի ու եռայ,
Որ մուրճերի տակ հեշտութեամբ ձուլի:
Զարկեցէք, որդիք, ահա զնգանը.
Այժմ երեսին իջէք հարւածներ.
Իրար թող ձուլեն նորը և հինը,
Թող զանգած կազմեն պողպատի շերտեր:
Ինչպէս որ շէնքի գլխին է ճայթում
Ահեղ փոթորիկ, կայծակ ու շանթեր,
Այնպէս էլ զնգանի գրխին են իջնում
Անողորմ մուրճի հուժկու հարւածներ:
Զարկեցէք, որդիք, գլուխն ամրանայ,
Ինչպէս սաղաւարդ զինւորի գլխին.
Հարւածի առաջ թող ըմբոստ մնայ,
Ինչպէս սև ժայռը փոթորկի ժամին:
Զարկեցէք այժմ զնգանի կրճէին,
Պողպատի շերտը թող պատի նրան.
Ինչպէս կուս զրահ ընդդէմ նետերին.
Թող նա պինդ գրկի մեր այս նոր զնգան:
Օրհնեա՛լ լինիք դուք, կարիչ իմ որդիք.
Ահա զնգանը աստրաստ է իսպառ,
Ազնիւ ձեռների ազնիւ արգասիք.
Նա մեր Մեծ Գործին կը լինի սատար:
Եւ այսուհետև պէսպէս գործիքներ
Կռենք ու կոփենք անդուլ, անդադար,
Գուշմանը դողա՛, հոգանք մեր ցաւեր,
Թող սա Սուրբ Գործին լինի միշտ սատար:
Արեւ կախուց լեռների մէջքին,

Հօտերը սարից խաղաղին դէպ ձոր,
Մառախուղն իջաւ, իջաւ գաշտերին,
Հօտաղ ու նախիր յետ եկան բոլոր:
Ցած դրէք ուսից դուք էլ ձեր մուրճեր,
Ժամն է հանգստեան նաև մեզ համար.
Վար առէք, որդիք, կաշէ գոգնոցներ,
Խաւարն է գալիս պատելու աշխարհ:
(Շարունակելի)
Ղ Ա Ր Ի Բ

Ն Ի Բ Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Թ. ք.-ից Հ. Ա.-ի միջոցով 1000 Ֆրանք, տիկ. Ա.-ից 50, Զոկ ուսանողից 27, օր. Ղ.-ից 100: Գումար 1177 Ֆրանք:

ՎՐԵՃԻ ԿԵԴՐ. ԿՕՖԻՏԷՆ՝

Մի ներկայացուցից 500 դրամ, ՆՈՐ ԳԻՂԴԻՑ՝ Ե. Տ. Կ. Ե.-ի միջոցով 75, ՇԱՀՐՈՒԹԻՑ՝ Շարհէնի միջոցով 250, ՎՐԵՃԻ ՄԻԿ-ուրճ՝ խ. 96, ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻՑ՝ Ե. Տ. Կ. Ե.-ի միջոցով 420. Վերջին գումարի ներատուներն են՝ Զօրան 40, Գազիկ, Բայրամ, Ն, Խեյրոց, Կարաբաղի ոմն, Ոյժ, Ազատուծիւն 80-ական, Ալան 25, Հուր 20, Սիրտ 20, Համակող, Լ. Մ. Խ., Ա., Գան 10-ական, Փիրաթամ, Սէր, Ոմն 15-ական, Կայծեր, Համակող ոմն, Վրէժ 5-ական, Ոյն 4, Պ. 1: Ամբողջ գումարն է 1341 դրամ:

ՆԱԽԱՂԱՆԳՍՈՒ ԿԵԴՐ. ԿՕՖԻՏԷՆ՝

Ղարիք՝ խ. 1900 թ. ԺՄԱԿ զիւղից 29 ուրախ 50 կօպէկ, Կար-պողպատից 22 ու 40 կ., Էէփէէ փողար 9 ու 40 կ., Հրա-ցանի փող 15 ուրախ: ԳԱՂԹԱՂԱՅՐԻ ՉԱՓՈՒՂ զիւղից Մ. Մեւ 15 ուրախ, Ե. Մար. 10, 2 դրացիներ 10, Գ. Թոր., Ե. Միք., Ա. Միք., Լ. Մեւ, Գ. Բաւ., Գ. Զօլ., Պ. Թոր., Գ. Ա., Բ. Մար., Մ. Խօժ., Կ. Փէր 5-ական, Պ. Բաւ. 4, Ա. Մ., Ե. Գաւ., Թ. Միք., Ա. Օրս., Ս. Մեւ, Խ. Թոր., Կ. Զօլ. 3-ական, Ն. Թոր., Ե. Միք., Ե. Մեւ, Ա. Բաւ., Մ. Թոր., Ա. Գաւ., Ե. Հուս. 2-ական, Գ. Շը., ... Գ. Մար., Պ. Խ., Հ. Գաւ., Թ. Գաւ., Պ. Արզ., Մ. Խօժ., Գ. Ն., Գ. Ներ., Ն. Թ. Ճիւ., Ա. Ճիւ., Ա. Ճիւ մէկ-մէկական: ԼՄՏԷՆԻ զիւղից՝ Մ. Թօփ. 10 ուրախ, Ե. Մար. 5, Մ. Մար. 4, Ս. Սեր., Ա. Մար., Ս. Մար., Հ. Սար., Մ. Խաֆ., Պ. Սար., Ե. Մար. 3-ական, Զ. Պահ., Ս. Փաւ., Պ. Թօփ., Բ. Միւ., Ե. Թօփ. 2-ական, Ե. Մար., Ե. Լուս., Ե. Շէկ., Պ. Թօփ., Մ. Ս., Ա. Մար. մէկ-մէկական: Ըստ համար գումար 332 ու 30 կօպէկ:

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՕՖԻՏԷՆ՝

Մարուֆ 20 դուրուշ, Թաթուլ եւ ընկերներ 20, Պաղօ 15 եւս 80, Զօլօ 40, Հսկայ 20, Վարդան 20, Զօլօ 20, Նազենիկ 5 եւս 12. 30, Պաղօ 20, Նազենիկի հայր 20, Զգայնիկ 42, Թաթուլ՝ խ. 55, Վրէժ՝ խ. 10, Կամաւոր 50, Պոհ՝ խ. 20, Թաթուլ՝ խ. 47, Ժողովի խումբէն 45 եւս 80, Նազենիկ եւ ընկերներ 8, Չիւստի զիւղի խումբէն 20 եւս 80, Պոհ՝ խ. 62, Թաթուլ՝ խ. 143. 20, Ապուրաթ 4. 20, Թաթուլ՝ խ. 35, Վրէժ՝ խ. 26, Արծրունի՝ խ. 35, Յաւալ՝ խ. 25, Զօլօ 44: ՏԱՌԵԻՍ քաղաքի Վոսակ՝ խումբէն 103 դրշ: ՍԱՆՈՅ 2ՈՐԻՆ 100: Համագումար 1277 դրշ. 30 փարայ:

ԼՕՐԷՆՍԻ կօփտէի հանգանակած ներատուներու ցանկը՝ Մորուք 2. 15 դուրաք, Ուստուրա 2, Գուրգէն 2, Երեք ղաւակիք 3, Միւ. Խաչիսթունեան 1. 50, Կանդիշ 1. 50, Համակիր մը 1. 50, Ե. Թ., ՄՄ. Գ.Գ., Գ. Թ., Զալի, Զուրուժ, Կայծակ, Սեւ, Իսմաիլ, Կ. Ե. Գ., Փէրիստ — մէկ-մէկական, Փիսոն. Ե., Խաչօ, Տուն մը, Կ. Ա., Խաչգոմ, Մամ, Բաւաթիմայ, Սաղը, Հրամս, Թոփ, Ս. Ս. 50-ական սէնթ, Մ. Գ. 25 ս., Հուր 25 ս., Սուր 15 ս., Տուն մը 50 ս.: Գումարը 80 դուրաք 50 սէնթ:

ՍՈՒՂԱՆԻ ՆՍՈՐ-ՂԱՐ՝ խ. (սպիւր մայիս եւ յունիս)՝ Համագումար 13 Ֆրանք, Տիգրան 6, Պարթև 2, Խոսրով 2, Վրդա-նէս, Գուրգէն, Հրամս, Վահրիշ, Միսակ, Վահրիշ, Միսակ, Միսակ, Միսակ, Աշոտ, Պետրոս 3-ական: Գումար 53 Ֆրանք:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցեով՝
Redaction du „Droschak“, Genève (Suisse)